

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Քրենիկնի Համար՝ Դասեր Քաղելու Ժամանակը

Վերջին շաբաթներուն, յատկապէս ատրայէճանական օդանաւի կործանումէն ետք, որուն համար Պաքու կը մեղադրէ Մոսկուային, Ռուսաստան-Ատրայէճան յարաբերութիւնները թեւակոխած են մոր հանգրուան ու հակա-ռուսական արշաւ մը սկսած է Ատրայէճանի պաշտօնական ու լրատուական շրջանակներուն կողմէ:

Պաքուի մէջ գործող «Ռուսաստանի Տունը» փակուեցաւ եւ այդ կառոյցը մեղադրուեցաւ լրտեսական որջի վերածուելու մէջ, ուր իբրեւ թէ Ատրայէճանի շահերուն ի վնաս գործունէութիւն կը ծաւալուի: Ազերի նախկին հինգ բարձրաստիճան պաշտօնեաներ ամբաստանուեցան, ի նպաստ Ռուսաստանի լրտեսական գործունէութիւն ծաւալելու մէջ:

Տակաւին անհասկնալի է թէ, Ատրայէճանի իշխանութիւնները ինչ նպատակ կը հետապնդեն մնացորդ հրապարակային մեղադրանքներով Ռուսաստանի հետ յարաբերութիւնները տանելով խզումի: Ոմանց կարծիքով Պաքու կը շարժի թուրքիոյ թելադրանքներով, ուրիշներ ունին այն տպաւորութիւնը, որ Ալիեւ կը փորձէ Եւրոպայի հետ մերձեցման հաւատարմագիր ներկայացնել: Տակաւին կայ այն տեսակետը թէ, Ռուսաստանի օգնութեամբ դարաբաղեան հարցը իր ուզած ձեւով լուծելէ ետք, ան այլեւս պէտք չունի այդ երկրին:

Ռուս մեկնաբաններէն մէկը անդրադառնալով Իլիւմ Ալիեւի վերջերս կատարած բացայայտ յարձակումներուն՝ Ռուսաստանի եւ անձամբ նախագահ Վլատիմիր Փութինի վրայ, եկած էր այն եզրակացութեան, որ յետ խորհրդային ղեկավարներէն շատերու մօտ դադրած է վախի գագուտը: «Ատրայէճան կը խոցէ ռուսական ուղղաթիռը 2020-ի երկրորդ դարաբաղեան պատերազմի ժամանակ, մենք կը ներենք, Ատրայէճանը կը շրջափակէ Ղարաբաղը, որ կ'աջակցէր Ռուսաստանին եւ կ'ուզէր իր ճակատագիրը կապել Ռուսաստանի հետ, աչք փակելով՝ Ատրայէճանը ԼՂ-էն կը վտարէ հաւատարիմ եւ հիմնականին մէջ ռուսալեզու հայ բնակչութիւնը, մենք կը հանդուրժենք, Ատրայէճանը լկտիաբար կը ձերբակալէ Ռուսաստանի հետ դաշինքի կողմնորոշում ունեցող Ղարաբաղի ղեկավարութիւնը, այդ շարքին՝ գործարար եւ բարերար Ռուբէն Վարդանեանը,

## Սաքրոն Վերահաստատած է Ֆրանսայի Վճռականութիւնը՝ Աջակցելու Հայաստանի Տարածքային Անբողջականութեան

Փետրուր 11-ին, էլիզէի պալատին մէջ տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ:

Ֆրանսայի նախագահը ողջունած է ՀՀ վարչապետին այցը եւ շնորհակալութիւն յայտնած է Փաշինեանի մէջ տեղի ունեցած Արհեստական բանականութեան գործողութիւններու գազաթափողովին մասնակցելու հրաւերը ընդունելու համար:

Ան կարեւորած է Հայաստանի եւ Ֆրանսայի միջեւ բազմոլորտ համագործակցութեան շարունակական զարգացումը եւ վերահաստատած է Ֆրանսայի աջակցութիւնը՝ ի նպաստ Հայաստանի զարգացման եւ կայունութեան ապահովման:

Ֆրանսայի ղեկավարը վերահաստատած է իր երկրի լիակատար աջակցութիւնը Հայաստանի եւ Ատրայէճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման եւ միջազգային իրաւունքին համապատասխան խաղաղութեան պայմանագրի ստորագրման:

Այս մասին ըստած է էլիզէի պալատի կողմէ հրապարակուած հաղորդագրութեան մէջ, ուր կը նշուի, որ Ֆրանսական կողմը նաեւ



Նախագահ Էմանուէլ Մաքրոն Էլիզէի պալատի մուտքին կը դիմաւորէ վարչապետ Փաշինեանին

վերահաստատած է Ֆրանսայի վճռականութիւնը՝ աջակցելու Հայաստանի ամբողջականութեան եւ տարածքային ինքնիշխանութեան եւ հայ ժողովրդի՝ խաղաղութեան, անվտանգութեան եւ ժողովրդավարութեան ձգտումներուն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհակալութիւն յայտնած է ջերմ հիւրընկալութեան համար՝ ընդգծելով, որ 2024 թուականը խիստ

աշխույժ եղած է Հայաստան-Ֆրանսա յարաբերութիւններու առումով:

Վարչապետը ընդգծած է, որ երկու երկիրներու ղեկավարներուն եւ գերատեսչութիւններուն միջեւ տեղի ունեցած են բազմաթիւ հանդիպումներ, կը պահպանուին կանոնաւոր շփումներ, եւ այսօր Հա-

## Հայաստանին Տրամադրել Պաշտպանական Ռազմասարքեր. Գոնկրէսականները Դիմած են Մարքո Ռուպիոյին

**ARMENIAN CAUCUS CO-CHAIRS SEND LETTER TO SECRETARY RUBIO HIGHLIGHTING PRIORITIES ON ARMENIA**



Գոնկրէսի հայկական հարցերով յանձնախումբի համանախագահներ Ֆրենք Փալոն, Կաս Պիլիքիա, Պրետ Շերման եւ Տէյվիտ Վալատասօ նամակ յղած են ԱՄՆ պետական քարտուղար Մարքո Ռուպիոյին, Ուաշինկթընին յորդորել շարունակել զարգացնել Հայաստանի հետ ռազմավարական գործընկերութիւնը:

«Այդ դուռ կը բանայ երկ-

կողմ աւելի սերտ կապերու, տնտեսական ներդրումներու, ժողովուրդներու միջեւ կապերու խորացման համար»,- ըստած է նամակին մէջ:

Ամերիկացի պաշտօնեաները մտահոգութիւն յայտնած են, որ Հայաստան կը բախի աշխարհագրական եւ քաղաքական բազմաթիւ խնդիրներու, քանի որ չունի էլք

## ԵՄ-Հայաստան Յարաբերութիւնները Երբեք Այնքան Սերտ Չեն Եղած, Որքան Հիմա

Եւրոմիութեան (ԵՄ) հետ մերձեցման գործընթացը թափ կը հաւաքէ, սակայն Հայաստանը անդամակցութեան պաշտօնական յայտ դեռ չէ ներկայացուցած, «Իզվեստիա» յայտնած են Եւրոյան ժողովէն:

«Հայաստանի մէջ ընթացող քննարկումները ցոյց կու տան Եւրոմիութեան գրաւչութիւնն ու անոր արժէքները: ԵՄ-Հայաստան յարաբերութիւնները երբեք այնքան սերտ չեն եղած, որքան հիմա: Վիզայի ազատականացման երկխօսութեան մեկնարկը եւ 10 միլիոն եւրոյի աջակցութիւնը Եւրոպական խաղաղութեան հիմնադրամի շրջանակներուն մէջ այդ ցոյց տուած են»,- կ'ըսուի յայտարարութեան մէջ:

Պրիւքսէլ խոստացած է նաեւ հայ գործընկերներու հետ քննարկել Եւրոհամարկման մասին օրէնքի նախագիծը: Թէեւ ԵՄ-ին անդամակցութեան հարցը դեռ իրական օրակարգին վրայ չէ, Հայաստան արդէն կ'երթայ դէպի Միութեան հետ աւելի խոր գործընկերութիւն:

# Սուրեն Պապիկեան Զորակայանին Մէջ Մասնակցած Է «Aero India» Ցուցահանդէսի Բացման Արարողութեան



ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեան Գերկայ կը գտնուի «Aero India» ցուցահանդէսին

Հնդկաստան կատարած աշխատանքային այցի շրջանակին մէջ, Փետրուար 10-ին, ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեան Հնդկաստանի օդուժի «Ելահանք» գորակայանին մէջ մասնակցած է «Aero India» ցուցահանդէսի բացման հանդիսաւոր արարողութեան:

Պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեան շրջած է ցուցահանդէսի տաղաւարներուն մէջ, ծանօթացած է ներկայացուած ցուցանմուշներուն:

Նախարար Պապիկեան, Փետրուար 11-ին, մասնակցած է «Aero India» ցուցահանդէսի շրջանակին մէջ տեղի ունեցող պաշտպանութեան նախարարներու «Կառուցել դիմադրողականութիւնը միջազգային պաշտպանութեան եւ համաշխարհային ներգրաւման միջոցով» թեմայով առանձնաժողովին:

Նախարարը իր ելոյթին մէջ նշած է, որ Հայաստանի ու Հնդկաստանի համատեղ ջանքերը ուղղուած են ոչ միայն երկիրներու պաշտպանունակութեան բարձրացման, այլեւ միջազգային ու տարածաշրջանային անվտանգութեան, խաղաղութեան եւ կայունութեան ապահովման:

Հայաստանի պաշտպանական

զերտեսչութեան ղեկավարը ներկայացուցած է տարածաշրջանային անվտանգութեան հարցերու շուրջ Հայաստանի մօտեցումները, ինչպէս նաեւ ՀՀ կառավարութեան «Խաղաղութեան Խաչմերուկ» նախագիծը:

Սուրեն Պապիկեան նաեւ գրոյց ունեցած էր Հնդկաստանի զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետ Անիլ Չաուհանի հետ:

«The Times of India» պարբերականը, վկայակոչելով իր աղբիւրները, անցեալ տարուայ Հոկտեմբերի վերջը հաղորդեց, որ Հայաստան, ԱՄՆ եւ Ֆրանսա 2023-2024 Ֆինանսական տարուան մէջ դարձած են հնդկական պաշտպանական արտադրանքի խոշորագոյն ներկրողները:

Հրապարակման համաձայն՝ Հայաստանը վերջին չորս տարուայ ընթացքին շարք մը գործարքներ կնքած է Հնդկաստանի հետ՝ հրթիռներու, հրետանիի, հրթիռային համակարգերու, ռատարներու, գրահաբաճկոններու եւ գիշերային տեսողութեան սարքերու, ինչպէս նաեւ զինամթերքի եւ հրետանիի լայն տեսականի ներկրելու համար:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը չէ մեկնաբանած ռազմական գնումները:

րաբերութիւնները:

«Կոչ կ'ընենք Պետական Քարտուղարութեան՝ դիտարկել Հայաստանի կառավարութեան խնդրանքը՝ պաշտպանական ռազմասարքեր տրամադրել, անձնակազմի վերապատրաստումներ իրականացնել՝ երկրի տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու համար: Այդ կարեւոր է՝ հաշուի առնելով Հայաստանի ինքնիշխան տարածքին գտնուող ատրպէյճանական զօրքերէն բխող մշտական սպառնալիքները եւ Իլհամ Ալիեւի նախադրածակ հռետորաբանութիւնը», - ըստած է նամակին մէջ:

Ամերիկացի պաշտօնեաները կոչ ըրած են Ուաշինկթընին՝ պատասխանատուութեան ենթարկել Ատրպէյճանը՝ Լեռնային Ղարաբաղի մէջ կատարած ռազմական յանցագործութիւններուն եւ ցեղային զտման համար:

«Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տեւական եւ արդար խաղաղութիւնը կը պահանջէ խիստ հաշուետուողականութիւն եւ պէտք

# Հնդկաստանը Գործընկեր Եւ Հայաստանի Բազմաշերտ Պաշտպանութեան Ինդիկատոր

## ՅԱԿՈՒ ԲԱՂԱԵԱՆ

Պաշտպանութեան նախարար Սուրեն Պապիկեանը, որ Փետրուարի 8-ին աշխատանքային այցով մեկնել է Հնդկաստան, այդ երկրում մասնակցել է ռազմական աւիացիոն ցուցահանդէսի բացմանը: Հայաստանը ռազմատեխնիկական գնումների առումով հետաքրքրութիւններ ունի ցուցահանդէսում, պարզ չէ, սակայն հայ-հնդկական ռազմական, ռազմատեխնիկական գործակցութեան համատեքստում թերեւս կայ մի կարեւոր ասպեկտ, որը առանցքային է հեռանկարի իմաստով: Հնդկաստանը Հայաստանի համար դարձել է պաշտպանական գնումների հիմնական ուղղութիւններից մէկը:

Սակայն հայ-հնդկական գործակցութեան ու հետաքրքրութիւնների շրջանակ, ի հարկէ, չի սահմանափակուում լոկ այդ ոլորտով: Հետեւաբար, հայ-հնդկական յարաբերութեան պաշտպանական բաղադրիչն ունի թերեւս ոչ միայն պարզապէս գնումների, այլ համատեղ արդիւնաբերութեան անհրաժեշտութիւն: Հնդկաստանը քաղաքական հետաքրքրութիւն է ցուցաբերում Կովկասի ուղղութեամբ: Հայաստանն այստեղ ունի առանձնաշատուկ դեր՝ հաշուի առնելով այն, որ դա Հնդկաստանի համար լոգիստիկ այլընտրանք է մի շարք առումներով:

Իսկ քաղաքական հետաքրքրութիւնների հանգամանքը պէտք է ենթադրել ոչ միայն պարզապէս պաշտպանական գնումներ, այլ անվտանգութեան արդիւնաբերական համատեղ ծրագրեր, որը պաշտպանական գործակցութեան էֆեկտը կբազմապատկի նաեւ տնտեսական եւ տեխնոլոգիական գործակցութեան էֆեկտով: Ժամանակակից աշխարհում պաշտպանական գործակցութիւնն ավելի բազմաշերտ համակարգ ենթադրող բաղադրիչ է, որն իր այդ բազմաշերտութեան հետ մէկտեղ աւելացնում է ճկունութիւնը, արդիւնաւետութիւնը, կայունութիւնը, ինչպէս նաեւ փոխադարձ շահերի կապակցման խորութիւնը:

Այս օրինակը հնարաւոր է տեսնել մի շարք այլ ուղղութիւններով, որտեղ ծաւալուած են աշխարհաքաղաքական նշանակալի դերակատարում ունեցողների, կամ այդպիսի յաւակնութիւն դրսեւորողների գործողութիւնները: Նոյն Ադրբեյջանը, որ գէնքի բազմամիլիարդ գնումներով աչքի ընկնում տարբեր ուղղութիւններից, նաեւ բաւականին առաջ է շարժուել ռազմաարդյունաբերական համա-

է ներառէ հայերու անվտանգ ու ապահով վերադարձի երաշխիքներ իրենց նախնիներու հայրենիք՝ Լեռնային Ղարաբաղ: Ուստի կոչ կ'ընենք Պետական Քարտուղարութեան աշխուժութեան գործընթացին», - նշած են գոնկրէսականները:

Նամակին մէջ կը նշուի, որ վերջնական համաձայնագիրը պէտք է նախատեսէ նաեւ Ատրպէյճանի մէջ անարդարացիօրէն պահուող բոլոր գերիներու եւ պատանդներու, այդ շարքին՝ Լեռնային Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ղեկավարութեան ներկայացուցիչներու ազատ արձակումը:

տեղ ծրագրերի կազմակերպման ուղղութեամբ: Ընդ որում՝ Հայաստանի համար այս խնդիրը, անշուշտ, չպէտք է սահմանափակուի միայն Հնդկաստանի հետ յարաբերութեամբ: Այն պէտք է նպատակ լինի գործնականում բոլոր այն գործընկերների հետ աշխատանքի համատեքստում, որոնց ուղղութեամբ Հայաստանը դիտարկում է պաշտպանական ոլորտի գործակցութեան հնարաւորութիւն եւ հեռանկար:

Յատկապէս հաշուի առնելով մատակարարումների լոգիստիկ բարդութիւնների խնդիրը, Հայաստանում ռազմաարդյունաբերական տեղական կարողութիւնների զարգացումը ստանում է առաւել մեծ նշանակութիւն: Իսկ այդ կարողութիւնների զարգացման հարցում արդիւնաբերական հզօրութեան «դուրս գալու» համար աներկբայ անհրաժեշտ են այդ դաշտում առաւել մեծ ու համակարգային առաջընթաց եւ կարողութիւն ունեցող գործընկերներ: Հնդկաստանը միակը չէ, անշուշտ, սակայն այստեղ բաւականին շօշափելի է ընդհանուր հետաքրքրութիւնների դաշտը, հետեւաբար Հնդկաստանը դառնում է նաեւ կարեւոր ինդիկատոր, թէ Հայաստանը որքանով արդիւնաւէտ կարող է զբաղուել պաշտպանական համակարգի վերափոխմամբ՝ այդ հասկացութեան բազմաշերտ իմաստով:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

**ՄԱՍԻՍ**  
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

**ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$75.00, \$150.00 (First Class)  
Canada \$ 250.00 (Air Mail)  
Overseas \$400.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

# Հայաստանին Տրամադրել Պաշտպանական

Շարունակուած էջ 1-էն

դէպի ծով, շրջափակուած է թուրքիոյ եւ Ատրպէյճանի կողմէ, ինչը կը զսպէ Հայաստանի տնտեսական ներուժը:

«Միացեալ Նահանգները բացառիկ հնարաւորութիւն ունի ազդելու տարածաշրջանի ապագային վրայ՝ ամրապնդելով Հայաստանի ուժանիւթային անվտանգութիւնը եւ տնտեսական ճկունութիւնը՝ «Խաղաղութեան Խաչմերուկ» նախագիծին համահունչ: Ներդրումները հնարաւորութիւն պիտի տան Հայաստանին բազմազանցնել ուժանիւթի արտադրութիւնը, նուազեցնել Ռուսաստանէն ուժանիւթային եւ առեւտրային կախուածութիւնը», - նշուած է փաստաթուղթին մէջ:

Գոնկրէսականները Պետական Քարտուղարութեան յորդորած են արագացնել բանակցութիւնները խաղաղ ատոմի ոլորտին մէջ գործակցութեան շուրջ, զարգացնել պաշտպանական, արտահանման վերահսկման եւ սահմանային անվտանգութեան ոլորտներուն մէջ յա-

ԼՈՒՐԵՐ

Այս ՏարուրնԷ Գիտնականները Եռակի Եւ Նոյնիսկ Քառակի Անգամ Շատ Աշխատավարձ Պիտի Ստանան. Սիսակ Գաբրիէլեան

Ազգային Ժողովի ՔՊ խմբակ-ցութեան պատգամաւոր Սիսակ Գաբրիէլեան ֆէյսպուքեան իր էջով գրած է.

«Այս տարուանից գիտնականները եռակի եւ նոյնիսկ քառակի անգամ շատ աշխատավարձ կը ստանան:

Եւ այսպէս, յարգելի՛ քաղաքացի, քո վճարած հարկերի հաշուին, 4 տարի առաջ մեկնարկած եւ այս տարուայ Յունուարի 1-ից ամբողջութեամբ ուժի մէջ մտած օրէնքով՝ 2021թ համեմատ

354 գիտական ստորաբաժանման ղեկավար 141.000-ի փոխարէն արդէն ստանում է 477.200 դրամ (եռակի)

910 գիտաշխատող 90.400-ի փոխարէն ստանում է 276.000 դրամ (եռակի)

675 աւագ գիտաշխատող 99.000-ի փոխարէն ստանում է 343.000 դրամ (3,5 անգամ)

277 առաջատար գիտնական 114.300-ի փոխարէն ստանում է 443.800 դրամ (3,8 անգամ)

29 զլխաւոր գիտաշխատող 138.100-ի փոխարէն արդէն ստանում է 552.900 դրամ (4 անգամ)

82 գիտական խմբի ղեկավար 129.100-ի փոխարէն արդէն ստանում է 410.000 դրամ (3 անգամ)

Եւ սա դեռ ամբողջ ցանկը չէ: Աւելի կարեւորն այն է, որ սա միայն նրանց հիմնական աշխատավարձն է:

Մեր գիտնականների մի զգալի հատուածը, բացի այս կայուն աշխատավարձից, ներգրաւուած է նաեւ պետական մի քանի հարիւր միլիոնանոց դրամաշնորհային ծրագրերում՝ լրացուցիչ եկամուտ ապահովելով իրենց հետազոտու-



Ազգային Ժողովի պատգամաւոր Սիսակ Գաբրիէլեան

Թիւնները համար:

Այս թուերը ցոյց են տալիս, որ գիտութիւնը եւ գիտնականը Հայաստանում զնահատուում են ոչ թէ միայն խօսքերով ու կենացներով, այլ ճշգրիտ գործողութիւններով եւ պետական յստակ քաղաքականութեամբ՝ ապահովելով նրանց արժանապատիւ վարձատրութիւնը եւ կայուն գործունէութեան հնարաւորութիւնը: Միւրեւի գիտնականներ, շնորհակալ ենք: Այս բարեփոխումները շարունակուում են, տնտեսական զարգացմանը համընթաց ու նոր չափանիշերի կիրառմամբ Ձեր աշխատավարձերը պիտի աւելի բարձրանայ: Հարկ վճարող քաղաքացին էլ պիտի տեսնի ու զգայ գիտութեան ուժն ու բարիքը:

Այո՛, այս թուերը հարկերը ներառեալ են, բայց նաեւ 2021-ի հարկերը ներառած թուերն են գրել:

Ի դէպ այն ժամանակ հարկուում էինք 23-36 տոկոս եկամտահարկով, իսկ այժմ 20 տոկոս»:

Ձալալ Յարութիւնեան Դատապարտուած Է 5,5 Տարի Բանտարկութեան

Սիւնիքի մարզի դատարանը Արցախի Պաշտպանութեան Բանակի նախկին հրամանատար Ձալալ Յարութիւնեանը մեղաւոր ճանչցած եւ դատապարտած է բանտարկութեան 5,5 տարի ժամկէտով:

Անոր մեղադրանք առաջադրուած էր ՀՀ Քրէական օրէնսգրքի 550-րդ 3-րդ մասով (Զինուորական պաշտօնական անփութութիւնը):

Յիշեցնենք՝ 2022 թուականի Սեպտեմբեր 2-ին էր Քննչական կոմիտէն յայտարարած էր Ձալալ Յարութիւնեանին մեղադրանք առաջադրելու մասին:

Ըստ ՔԿ հաղորդագրութեան՝ Ձալալ Յարութիւնեանը 44-օրեայ պատերազմի ընթացքին՝ յայտարարուած ռազմական դրութեան պայմաններուն մէջ, անփութ վերաբերմունք դրսեւորած է իր ծառայողական պարտականութիւններուն նկատմամբ՝ չկատարելով եւ ոչ-պատշաճ կատարելով զանոնք, որուն հետեւանքով յառաջացած են ծանր հետեւանքներ:



Արցախի Պաշտպանութեան Բանակի նախկին հրամանատար Ձալալ Յարութիւնեան

Յորի գործասի Դ-20 հրետանային բաժանմունքի 20 զինուոր գոհուած է, իսկ մէկ զինուորի գտնուելու վայրը մինչեւ օրս անյայտ է:

Վերջին Հինգ Տարիներուն Զբօսաշրջութեան Ոլորտին Մէջ 16 Տոկոս Աճ Արձանագրուած Է

2024 թուականին Հայաստան այցելած է 2 միլիոն 208 հազար 179 զբօսաշրջիկ:

Ամփոփելով պաշտօնավարման 100 օրը՝ այս մասին յայտնած է Զբօսաշրջութեան կոմիտէի նախագահ Լուսինէ Գէորգեանը:

«Դա 4,6 տոկոսով աւելի քիչ է, քան 2023-ին, երբ ՀՀ է այցելել 2 միլիոն 316 հազար մարդ: Ռուսաստանից ունենք նուազում, սակայն ունենք աճ եւրոպական եւ ասիական երկրներից, ինչի հաշուին զբօսաշրջութեան կշռոյթները նուազել են ընդամենը 4,6 տոկոսով:

«ՌԴ-ից Հայաստան է այցելել 937 հազար 823 զբօսաշրջիկ՝ ընդհանուր զբօսաշրջիկների 43 տոկոսը: Վրաստանից Հայաստան է այցելել 279 հազար 368 զբօսաշրջիկ՝ ընդհանուր զբօսաշրջիկների 13 տոկոսը», - նշած է ան:

Լուսինէ Գէորգեանի խօսքով՝ 2019-ին Հայաստան եկած է 1,8 միլիոն զբօսաշրջիկ:

«Կարող ենք գրանցել 16 տոկոս աճ զբօսաշրջութեան ոլոր-



Զբօսաշրջութեան կոմիտէի նախագահ Լուսինէ Գէորգեան

տում՝ վերջին հինգ տարիների ընթացքում», - յաւելած է ան:

Զբօսաշրջութեան կոմիտէի նախագահին խօսքով՝ հինգ տարիներու նշաձողը սահմանած են 3 միլիոն զբօսաշրջիկի այցելութիւն Հայաստան եւ այդ ուղղութեամբ աշխատանքներ կ'իրականացնեն:

2025-ի Յունուար 1-ի Դրութեամբ Հայաստանի Մէջ Կայ 123 Կուսակցութիւն

Հայաստանի մէջ 2024 թուականի Դեկտեմբեր 31-ի դրութեամբ կան գրանցուած (հաշուառուած) մասնաւորապէս 123 կուսակցութիւն, 63 կրօնական կազմակերպութիւն, 1797 հիմնադրամ, 3907 հասարակական կազմակերպութիւն, 213.140 անհատ ձեռնարկատէր, 100.066 Սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութիւն, 3156 Փակ բաժնետիրական ընկերութիւն: Այս մասին civic.am-ը տեղեկացաւ ԱՆ իրաւաբանական անձերու պետական արձանագրութեան հրատարակած 2024 թուականը ամփոփող հաշուետուութենէն: 2024 թուականին, ըստ պետական արձանագրութեան, գրանցուած են 8 կուսակցութիւն, 445 հասարակական կազմակերպութիւն, 104 հիմ-

նադրամ, 25.842 անհատ ձեռնարկատէր, 8381 ՍՊԸ, 112 ՓԲԸ: Նախորդ տարի կրօնական եւ որեւէ կազմակերպութիւն չէ գրանցուած: Նշենք, որ 2024-ին գրանցուած եւ ընդգրկմադիր դաշտին մէջ դիրքաւորուած են մասնաւորապէս Ռուսաստանի մէջ փախստականի կարգավիճակով հանգրուանած «ԴԱՀԿ-ի Միհրանի»՝ Միհրան Պողոսեանի «Հայոց համազգային միասնութիւն»-ը, նախկին քաղաքացեալ Հայկ Մարութեանի «Նոր ուժ»-ը, Ռուսաստանի մէջ ծուարած մէկ այլ պաշտօնեայ՝ պաշտպանութեան նախկին նախարար Արշակ Կարապետեանի «Համահայկական ճակատ»-ը, արտերկրի մէջ գտնուող Վարդան Դուկասեանի ԴՕԿ-ը:

Երեւանի Քաղաքապետարանի Քանի Մը Պաշտօնեայ Չերակալուած Են

Երեւանի քաղաքապետարանի քանի մը պաշտօնյաներ ձերբակալուած են: Հակափտածութեան կոմիտէն կը հաստատէ ձերբակալութիւններու փաստը, բայց չի յստակացներ, թէ քանի հոգի են պաշտօնեաները, ովքեր են, ինչի մէջ կը կասկածուին: Կոմիտէի խօսնակը միայն յայտնեց՝ գործողութիւնները կ'իրականացուին քննուող վարույթի շրջանակներուն մէջ:

«Ազատութեան» տեղեկութիւններով, սակայն, ձերբակալուածներէն մէկը Երեւանի քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանութեան ղեկավար Արամ Գիւլջաղեանն է: 50-ամեայ նախկին բարձրաստիճան ոստիկանը 2019 թուականին Երեւանի քաղաքապետարանի Հասարակական կարգի պահպանութեան ծառայութեան ղեկավարն է:

Որքա՞ն Է Հայաստանի Մշտական Բնակչութիւնը 2025-ի Յունուար 1-ի Դրութեամբ

Սկսած 2023-էն բնակչութեան թուաքանակի ընթացիկ հաշուառումը կ'իրականացուի ՀՀ 2022թ. մարդահամարի արդիւնքներու հիման վրայ, ըստ որուն՝ 2025թ. Յունուար 1-ի դրութեամբ ՀՀ մշտական բնակչութեան թուաքանակը կազմած է՝ 3.075.800 մարդ 2024 թուականի 2.991.200-ի համեմատ: Այս մասին civic.am-ը տեղեկացաւ Վիճակագրական կոմիտէի հրատարակած տեղեկանքէն: Մասնաւորապէս Երեւանի մէջ բնակչութեան թուաքանակը աճած է՝ 2025թ. Յունուար 1-ի դրութեամբ մայրաքաղաքին մէջ կը բնակի 1.141.300 մարդ՝ նախորդ տարուայ 1.106.300-ի դիմաց: 2024թ.-ին բնակչութեան կենսունակութեան գործակիցը՝ ծնած-

ներու եւ մահացածներու յարաբերակցութիւնը, կազմած է 131.6%՝ 2023թ.-ի նոյն ժամանակաշրջանի 150.5%-ի համեմատ: Սեւերու յարաբերակցութեան գործակիցն ալ կենդանի ծնած նորածիններու շրջանակին մէջ կազմած է 109.9 տոյ՝ 100 աղջկայ հաշուով, 2023թ.-ի 110.7-ի համեմատ:

Վիճակագրական կոմիտէի տուեալներէն դատելով՝ հաշուետու ժամանակաշրջանին մէջ աճած է ամուսնալուծութիւններու թիւը՝ 2024թ. Յունուար-Դեկտեմբերին արձանագրուած 1000 ամուսնութիւններու համեմատ արձանագրուած է ամուսնալուծութեան 306 դէպք՝ 2023թ. Յունուար-Դեկտեմբերին արձանագրուած 277-ին համեմատ:

# ԼՈՒՐԵՐ

## Փաշինեան Փարիզի Սեշ Ներկայ Գտնուած Է Արհեստական Բանականութեան Գազաթափողովի Լիագումար Նիստին



### Արհեստական բանականութեան գործողութիւններու գազաթափողովի մասնակիցներու խմբակարգը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան Փարիզի մէջ ներկայ գտնուած է Արհեստական բանականութեան գործողութիւններու գազաթափողովի լիագումար նիստին: Վարչապետը եւ միւս բարձրաստիճան հիւրերը դիմաւորած է Ֆրանսայի արտաքին գործերու նախարար Ժան-Նոէլ Պարո:

Միջոցառման մասնակցած են Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնը, Հնդկաստանի վարչապետ Նարենտրա Մոտին, ԱՄՆ փոխնախագահ Ճէյմզ Ժէյքլիտը Վենսը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անթոնիո Կուլթերեշը, Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն տեր Լայենը, Գանատայի վարչապետ ձասթին Թրիւտօն եւ շարք մը այլ երկիրներու առաջնորդներ ու կառավարութիւններու ղեկավարներ:

Միջոցառման լիագումար նիստէն յետոյ տեղի ունեցած է գազաթափողովի մասնակիցներու տեսալուսանկարահանման արարողութիւնը:

Վարչապետ Փաշինեան գազաթափողովի շրջանակին մէջ կարճատեւ զրոյցներ ունեցած է միջազգային գործընկերներու հետ:

Մասնաւորապէս, վարչապետը Եւրոպական Յանձնաժողովի նախագահ Ուրսուլա Ֆոն տեր Լայենի հետ զրոյցին միտքեր փոխանակած է Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեան հետագայ զարգացման շուրջ:

Նիկոլ Փաշինեան հանդիպած է նաեւ Ֆրանքֆոնի միջազգային կազմակերպութեան գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիլիքայովի եւ միջազգային այլ գործընկերներու հետ:

## Ատրպէյճանի ԱԳՆ-ն Զերքած Է Հայաստանի Վարչապետին Յայտարարութիւնները

Ատրպէյճանի Արտաքին գործերու նախարարութիւնը հերքած է Հայաստանի վարչապետին յայտարարութիւնները, որ Պաքուի մէջ Հայաստանի անվտանգութեան դէմ իրական սպառնալիքներ կ'առաջացնեն:

Այս եւ Նիկոլ Փաշինեանի վերջերս հրապարակուած յօդուածին մէջ եղած այլ յայտարարութիւններ Պաքու անուանած է «իրականութեան խեղաթիւրում»:

ԱԳՆ մամուլի քարտուղար Այհան Հաճիգատէ իր արձագանքին մէջ կրկին մեղադրած է Հայաստանը սպառնալիքներ ձեռք բերելու համար, ապա կրկնած է Պաքուի տեսակէտը, թէ Հայաստանի Մահմանադրութեան մէջ «տարած քային նկրտումներ կան» Ատրպէյճանի նկատմամբ:

Տարածաշրջանին մէջ սրման համար որեւէ նախադրեալ չկայ, աւելին՝ բոլոր նախադրեալները ստեղծուած են խաղաղութեան համար, գրած է վարչապետը իր յօդուածին մէջ: Ան վերլուծած է հայ-ատրպէյճանական բանակցային

գործընթացը եւ յանգած է այսպիսի եզրակացութեան, ապա դիմած է Պաքուին:

«Հարկաւոր է հրաժարուել բեմականացուած գործողութիւններէն եւ մագլցումների բեմականացման քաղաքականութիւնից ու հաստատել հաստատութեանկան խաղաղութիւն: Հայաստանը ոչ միայն պատրաստ է սրան, այլեւ չի հրաժարուելու այս ճանապարհից», - նշած է վարչապետը:

Ատրպէյճանի ԱԳՆ խօսնակը յայտարարութեան մէջ նաեւ շեշտած է, որ «պարտաւորութիւններու կատարման ուղղութեամբ գործնական քայլեր ձեռնարկելու փոխարէն, այդ շարքին՝ Ատրպէյճանի եւ Նախիջեւանի միջեւ հաղորդակցութեան կապերու բացման որոշումներ մէջ, Հայաստան ուշադրութիւնը կը շեղէ այդ գործընթացէն»: Ան նշած է, թէ «Հայաստանի կողմէ գործնական նշանակութիւն չունեցող առաջարկները կը յանգեցնեն թիւրիմացութիւններու»:

## ՀՀ Տարածքի Միջով Արտատարածքային Միջանցք Պիտի Չըլլայ. Ալէն Սիմոնեան

«Իրենց համար շատ կարեւոր է իրենց արտագաւառի հետ կապը, որովհետեւ դա մի երկրից միւս մասը գնալն է, ու Հայաստանը իր վերաբերմունքը եւ առաջարկները դրա հետ կապուած նոյնպէս ներկայացրել է»:

Ազգային Ժողովին մէջ լրագրողներու հետ ճեպագրոյցի ժամանակ այս մասին ըսաւ ՀՀ ԱԺ նախագահ Ալէն Սիմոնեան:

«Մենք կարող ենք խօսել բեռների տեղափոխման մասին, եւ կարող է խօսք լինել քաղաքացիների մասին, որոնք կ'ուզենան մի կէտից միւս կէտը տեղափոխուել: Դրանց բոլորի հետ կապուած ՀՀ-ը առաջարկներ է ներկայացրել: Կազմի հանդիպման ժամանակ առաջարկ է քննարկուել, որը դրական մթնոլորտի մէջ է անցել, եւ հիմա դրա մանրամասներին ենք սպասում: Եկէք բոլորիս համար կարեւոր բան հաստատենք. ինչ ճանապարհ էլ լինի, իրենք դա անուանելու են միջանցք, նոյնիսկ եթէ զրոյ արտօնութիւն լինի», - ըսաւ ան:



ՀՀ ԱԺ նախագահ Ալէն Սիմոնեան

Խօսելով միջանցքի տրամադրման հնարաւորութեան մասին՝ ան ըսաւ. «Միջանցքը, որը չի լինի ՀՀ ինքնիշխանութեան ներքոյ, որը կը լինի մեր օրէնսդրութիւնից դուրս, մեզ համար անընդունելի է: ՀՀ տարածքի միջով արտատարած քային միջանցք չի լինելու»:

## Հայաստանի Պաշտպանական Կարողութիւնները Թոյլ Չեն Եւ Պէտք Չէ Թերագնահատել Ջանոնք. Իրանի Դեսպան



### Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպիանի մամլոյ ասուլիսի ընթացքին

Հայաստանի մէջ Իրանի դեսպանին հաւաստմամբ՝ Իրան դիւանագիտական ճանապարհով պիտի ընէ ամէն ինչ, որպէսզի Հարաւային Կովկասի մէջ կանխուի նոր մագլցում:

Այդ կարծիքը մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնեց Հայաստանի մէջ Իրանի արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհտի Սոպիանին՝ անդրադառնալով այն հարցին, թէ ինչ քայլերու պիտի դիմէ Իրան, եթէ հատուին անոր կողմէ յառաջ քաշուած կարմիր գիծերը եւ Ատրպէյճան յարձակի Հայաստանի վրայ:

«Մենք կողմնակից ենք դիւանագիտական երկխօսութեան միջոցով վիճահարոյց խնդիրները կարգաւորելու մօտեցման եւ միանշանակ դէմ ենք ուժի կիրառման միջոցով տարածաշրջանային հարցերը լուծելուն: Մենք պիտի գործադրենք մեր ամբողջ ջանքերը, ինչպէս նաեւ Ատրպէյճանի ու այլ երկիրներու հետ մեր յարաբերութիւնները, որպէսզի կովկասեան տարածաշրջանը չմտնէ նոր լարուածութեան փուլ: Միջանցք բանալու հարցով ուժի կիրառումը

որեւէ բացատրութիւն չունի: Իրան կը կիսէ Հայաստանի տեսակէտը առ այն, թէ որեւէ երկրի տարածքով անցնող ճանապարհները պէտք է գործարկուին այդ երկիրներու ինքնիշխանութեան ներքոյ: Սա նաեւ միջազգայնօրէն ընդունուած իրաւունք է: Եթէ Հայաստանի նկատմամբ իրականացուի յարձակում, ապա կը կարծեմ, որ նախեւառաջ Հայաստան ի գօրու պիտի ըլլայ պաշտպանելու ինքզինք: Հայաստանի պաշտպանական հնարաւորութիւնները թոյլ չեն եւ այդ կարողութիւնները պէտք է թերագնահատել», - ըսաւ դեսպան Սոպիանին:

«Մենք Հայաստանի կառավարութեան կողմէ սեփական քաղաքականութիւնը բազմազանեցնելու դիրքորոշման կը վերաբերինք յարգանքով: ՀՀ իշխանութիւնները մեզի յայտնած են, որ Եւրոմիութեան ու Եւրոպական շարք մը երկիրներու հետ Հայաստանի յարաբերութիւնները կրնան նաեւ լաւ հնարաւորութիւններ ստեղծել հայ-իրանեան փոխգործակցութեան համար», - ըսաւ Մեհտի Սոպիանին:

# «Եւրասիական Տնտեսական Միութեան եւ Եւրոմիութեան Միաժամանակ Անդամակցութեան Անհնարինութիւնը». Կալուզին

Արեւմուտքի գիծը Հարաւային Կովկասի մէջ Ռուսաստանի մէջ կը համարեն «բացարձակ ապակառուցողական, քանի որ այն ուղղուած է ոչ թէ Ռուսաստանի համար ռազմավարական կարեւորութիւն ունեցող այս տարածաշրջանին մէջ իրավիճակի կայունացման, այլ այն բանին, որ այս թեւէն փորձէ «աւանդ ներդնել մեզ ռազմավարական պարտութեան հասցնելու մէջ»: Այս մասին «Իզվեսթիա»-ին տուած հարցազրոյցին մէջ ըսած է Ռուսաստանի արտաքին գործերու փոխնախարար Միխայիլ Կալուզին:



Ռուսաստանի արտաքին գործերու փոխնախարար Միխայիլ Կալուզին

«...Եւ այս ամէնը տեղի կ'ունենան այն լոյսին տակ, որ Հայաստանի անդամակցութիւնը Եւրասիական Տնտեսական Միութեան շուրջը կը բերէ՝ ԵԱՏՄ-ի հետ առեւտուրի աճի եւ ԵԱՏՄ տարածքէն Հայաստան ներդրումներու աճի տեսքով: Հայ քաղաքական գործիչները ուրիշ անգամ կ'ըսեն, որ հայ հասարակութեան մէջ տրամադրութիւն կայ ԵՄ-ին անդամակցելու օգտին: Նման տրամադրութիւններ, հաւանաբար, կան, բայց, ինչպէս կը կարծենք, նոյնքան ուշադրութեան արժանի են Հայաստանի այն քաղաքացիներուն տրամադրութիւնները, որոնք կը մտածեն իրենց երկրի ապագային մասին եւրասիական ընտանիքին մէջ եւ եւրասիական համարկման շրջանակներուն մէջ»:

Խօսելով Հայաստանի եւ Արեւմուտքի սերտ համագործակցութեան մասին՝ Կալուզին նշած է, որ «պաշտօնական Երեւանը, հայկական պետութիւնը, հայ հասարակութիւնը եւ հայ ժողովուրդը ինքնիշխան որոշումներ կը կայացնեն՝ ինչպէս կառուցել իրենց արտաքին քաղաքականութիւնը եւ ինչպէս դիրքաւորել իրենց երկիրը միջազգային հանրութեան մէջ»:

ՌԴ ԱԳՆ ղեկավարի տեղակալը յիշեցուցած է, որ Մոսկուան յստակօրէն մատնանշած է Երեւանին Եւրասիական Տնտեսական Միութեան եւ Եւրոմիութեան միաժամանակեայ անդամակցութեան անհնարինութիւնը. «...Անոնք միանգամայն տարբեր համակարգեր են, եւ անոնց մէջ միաժամանակ ըլլալը ուղղակի անհնար է»:

## Սփիւռքին Կոչեր Ուղղելը, Թէ Պոյքոթեցէր Նիկոլ Փաշինեանը Եւ Անոր Հետ Մի՛ Հանդիպիք, Տկար Եւ Ծոյլ Մարդոց Կոչ Է. Թաթուլ Յակոբեան

Վերլուծաբան Թաթուլ Յակոբեանը ֆէյսպուքեան իր էջով գրած է.

«Սփիւռքին կոչեր ուղղելը, թէ պոյքոթէք Նիկոլ Փաշինեանին եւ նրա հետ մի հանդիպէք, թոյլ եւ ծոյլ մարդկանց կոչ է»:

Եթէ իրաւամբ ուզում էք, որ Սփիւռքը չհանդիպի Նիկոլ Փաշինեանին, ապա դրա համար պէտք է Հայաստանում իրականացնել իշխանափոխութիւն՝ ընտրութիւններով կամ փողոցով, ինչպէս արել է Փաշինեանը 2018-ին՝ փողոցով եւ 2021-ին՝ ընտրութիւններով (եւ այդ ընտրութիւններում իմ քուէն տուել եմ Լեւոնին):

Աւելին, Փաշինեանի հետ հանդիպած մարդկանց մեծ մասը Հայաստանին նուիրուած մարդիկ են, եւ նկարներով տեսայ, շատերին գիտեմ, ճանաչում եմ:

Այդ մարդիկ Հայաստանի համար աւելին են արել՝ չապրելով Հայաստանում, այդ թւում՝ Արցախի համար վերջին արհաւիրքից



Վերլուծաբան Թաթուլ Յակոբեան

յետոյ, ինչպէս, օրինակ, բժիշկ Պերճ Աբգարեանը, քան այդ թոյլ եւ ծոյլ մարդիկ, որոնց թւում է, թէ իրենց ասածը մեծ արժէք ունի Սփիւռքի համար»:

# Փաշինեանի Հանդիպումը Միացեալ Նահանգներու Փոխնախագահ Գ.Տ. Վենսի Հետ



Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը Միացեալ Նահանգներու փոխնախագահ Գեյմար Տեյլիտ Վենսի հետ

Փետրուար 3-ին Փաշինեան Ուաշինկթընի մէջ հանդիպում ունեցած է ԱՄՆ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ, պատասխանած՝ ներկաները հետաքրքրող շարք մը հարցերու:

Վարչապետը անդրադարձած է Հայաստանի մէջ եւ Հայաստանի շուրջ տեղի ունեցող գործընթացներուն, Հայաստանի մէջ տեղի ունեցող զաղափարախօսական փոփոխութեան՝ ընդգծելով՝ Հայաստանի Հանրապետութիւնը ինքն է բարձրագոյն նպատակը եւ Հայաստանի Հանրապետութեան աւելի բարձր ազգային նպատակ չի կրնար ըլլալ: Հայաստանի Հանրապետութիւնը ոչ թէ միջոց է՝ այլ նպատակներու հասնելու համար, այլ Հայաստանի Հանրապետութիւնը ինք նպատակն է, ամենաբարձր նպատակն է:

Փետրուար 4-ին ԱՄՆ-ի մէջ Հայաստանի դեսպանատան մէջ Փաշինեան հանդիպում ունեցած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ Վատիկանի միջեւ յանձնախումբի ատենապետ Տ. Վիգէն արքեպիսկոպոս Ալքազեանի եւ Ուաշինկթընի Սուրբ Աստուածածին եկեղեցու հոգեւոր հովիւ Տ. Յովսէփ քահանայ Կարապետեանի հետ: Հանդիպման ընթացքին քննարկուած են Սփիւռքի մէջ հայապահպանութեան եւ առկայ հիմնախնդիրներուն առնչուող հարցեր: Վարչապետը կարեւորած է լեզուի եւ մշակութի պահպանման ուղղութեամբ հետեւողական քայլերու իրականացումը՝ ընդգծելով այս հարցերուն մէջ պետական օժանդակութեան նշանակութիւնը:

Նոյն օրը Փաշինեան Ուաշինկթընի մէջ ներկայ գտնուած է «Save Armenia»-ի կողմէ կազմակերպուած ընդունելութեան՝ ի պատիւ վարչապետի այցին: Կրօնական ազատութիւններու միջազգային գազաթափողի համանախագահ, «Save Armenia»-ի խորհուրդի անդամ Սեմ Պրատուպեք ողջունած է ՀՀ վարչապետին այցը եւ ընդգծած կազմակերպութեան յանձնառութիւնը՝ աջակցելու Հայաստանին իր օրակարգերը յառաջ մղելու գործին մէջ:

Նոյն օրը վարչապետին ունեցած մէկ այլ՝ ԱՄՆ Ծերակոյտի եւ Գոնկրէսի ներկայացուցիչներ ծերակուտական Ռոնըր Ուիլքըրի (Հանրապետական կուսակցութիւն), գոնկրէսականներ Էնտի Հարրիսի (Հանրապետական կուսակցութիւն), Ֆրենք Փալոնի (Դեմոկրատական կուսակցութիւն) եւ Ռիչըրտ Հատսընի (Հանրապետական կուսակ-

ցութիւն) հետ հանդիպման ժամանակ ալ քննարկուած են Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ ռազմավարական գործընկերութեան զարգացման հեռանկարները:

Փետրուար 5-ին Նիկոլ Փաշինեան Ուաշինկթընի մէջ այցելած է Ատլանտեան Խորհուրդը, ուր հանդէս եկած է ելոյթով, պատասխանած է Ատլանտեան Խորհուրդի Եւրասիոյ կեդրոնի աւագ տնօրէն, Ուղղափառութեան եւ Ուրբանիոյ մէջ ԱՄՆ նախկին դեսպան ձոն Հերպսթի հարցումներուն: Այնուհետեւ հանդիպումը կատարուած է փակ ձեւաչափով, որու ծիրին մէջ Նիկոլ Փաշինեան պատասխանած է փորձագէտներու շարք մը հարցերու:

Փետրուար 6-ին Փաշինեան Ուաշինկթընի մէջ այցելած է ձործթաունի համալսարան, հանդէս եկած է դասախօսութեամբ, որուն ներկայ եղած է քաղաքագիտութիւն, միջազգային յարաբերութիւններ եւ անվտանգութիւն ուսումնասիրող ուսանողներ եւ դասախօսներ:

Նոյն օրը Ուաշինկթընի մէջ վարչապետը հանդիպում ունեցած է Միջազգային Հանրապետական Հիմնարկի (IRI) նախագահ Տանիէլ Թուրիսիակի հետ, քննարկած է ՀՀ կառավարութեան եւ Հիմնարկին միջեւ համագործակցութեան ընթացքը, Հայաստանի մէջ իրականացուող ծրագրերը, ինչպէս նաեւ հետագայ համատեղ քայլերը՝ ուղղուած ժողովրդավարական բարեփոխումներու խորացման:

Փետրուար 6-ին կայացած միւս հանդիպումը ամերիկեան ռազմավարական հետազոտութիւններու Heritage հիմնադրամի ներկայացուցիչներու հետ էր: Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ռազմավարական գործընկերութեան փաստաթուղթի ստորագրման ծիրին մէջ կարեւորուած է երկկողմ փոխգործակցութեան զարգացումը տնտեսութեան, ուժանիւթի, ներդրումներու, կրթութեան, առողջապահութեան եւ այլ ոլորտներու մէջ:

Փետրուար 7-ին, Սպիտակ տան մէջ տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպումը Միացեալ Նահանգներու փոխնախագահ ձէյմա Տէյլիտ Վենսի հետ: Հանդիպման ընթացքին, ինչպէս տեղեկացուցած է վարչապետի մամուլ ծառայութիւնը, քննարկուած են Հայաստան-ԱՄՆ երկկողմ յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ տարածաշրջանային օրակարգին վերաբերող հարցեր:

### Փաշինեանի Սայթաքումն Ու Ճշդումը



#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Յունուար 24-ին, Յիւրիի մէջ Զուլիցերիոյ հայ համայնքին հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին վարչապետ Նիկոլ Փաշինեան տարօրինակ արտայայտութեամբ մը ըսած է. «Դեռ պէտք է հասկանալ՝ ի՞նչ է տեղի ունեցել Հայոց ցեղասպանութեան ժամանակ, ինչո՞ւ եւ ո՞ւմ միջոցով ենք ընկալել Հայոց ցեղասպանութիւնը»:

Փաշինեանի կողքին կանգնած հնչակեան մամուլը, անդրադառնալով նման տարօրինակ եւ անընդունելի յայտարարութեան, իր Լոս Անճելըսի «Մասիս» շաբաթաթերթի առաջին էջին վրայ երեւցող խմբագրականով («Ցեղասպանութեան իրողութիւնը քննարկման առարկայ չի կրնար ըլլալ»), քննադատեց Փաշինեանի յայտարարութիւնը՝ գրելով հետեւեալը. «Վերջին շրջանին վարչապետ Փաշինեան սկսած է մտային մարզանքներով հանդէս գալ՝ խօսելով իրական Հայաստանի ու պատմական Հայաստանի, Արագածի ու Արարատի, Մեծ եղեռնի ու Ցեղասպանութեան եւ այլ նիւթերու մասին: Այս օրերուն երբ հայութիւնը կը դիմագրաւէ բազում խնդիրներ ու լինելութեան պայքար կը մղէ Հայաստանէն մինչեւ սփիւռք, նման օրակարգեր պէտք է դուրս մնան մեր ամէնօրեայ քննարկումներէն՝ կեդրոնանալու համար շատ աւելի հրատապ հարցերու վրայ: Ամէն մէկ չմտածուած ու ժողովուրդի բազմաթիւն չհամապատասխանող արտայայտութիւն շուքի տակ կը ձգէ այն նուաճումները, որոնք արձանագրուեցան թաւշեայ յեղափոխութենէն ասդին»:

...Հրապարակ նետելով նոր միտքեր ու անոնց շուք ճանդէս գալով անյաջող ձեւակերպումներով՝ Փաշինեան առիթ կու տայ իր հակառակորդներուն զինք մեղադրելու Ցեղասպանութիւնը ուրանալու եւ ազգային արժէքներէն հրաժարելու մէջ: Այս միտքերը լայն արձագանգ կը գտնեն նաեւ սփիւռքի տարածքին, ուր բազմահազար հայերու համար ազգային մեր հաւատամքները կը մնան հայապահպանութեան գլխաւոր գրաւակները»:

Շուտով հնչակեան մամուլի Պէյրութ հրատարակուող «Արարատ» օրաթերթը վերահրատարակեց «Մասիս» շաբաթաթերթի խմբագրականը իր առաջին էջին վրայ՝ իր գորակցութիւնը յայտնելով անոր բովանդակութեան:

Ու Փաշինեան շաբաթ մը ետք, յունուար 31-ին տուած իր մամուլի ասուլիսին ընթացքին, անդրադառնալով Յիւրիի մէջ իր ըրած յայտարարութեան՝ զղջումի կամ ճշդումի քաջութեամբ ըսաւ հե-

տեւեալը. «Ցեղասպանութեան ժխտումը կամ ուրացումը, հերքումը Հայաստանում քրէական յանցագործութիւն է: Ցեղասպանութեան փաստն անքննելի է եւ անժխտելի: Մեծ եղեռնը ոչ միայն անհերքելի է, դա մեր ինքնութեան մաս է, դա ուզելով-չուզելով չէ, չկայ դենց ուժ, չի կարող դա անել, դա ի՛մ, ձե՛ր, բոլորի՛ս արեան մէջ է, երակների մէջ է, եւ նման բան ասելը նշանակում է չճանաչել սեփական ժողովուրդի ինքնութիւնը»:

Վարչապետ Փաշինեան հայաստանաբնակ իր քուէարկողներուն հանգիստն ու բարօրութիւնը նկատի առնելով գուցէ կ'ուզէ ամէն գնով խաղաղութիւն բերել իր ժողովուրդին՝ գոհացում տալու թէ՛ անոնց եւ թէ՛ այլ այն բոլոր միջազգային ուժերուն, որոնք ճնշում կը բանեցնեն իր վրայ, որպէսզի լուծում մը գտնէ իր թշնամի դրացիներուն հետ: Քաղաքական աշխարհի բառամթերքը ունի հակառակորդներու միջեւ անանցանելի կամ անխոցելի նկատուող գիծ մը, որ կը կոչուի ԿԱՐՄԻՐ ԳԻԾ: Գուցէ ամէն ինչ ընդունելի նկատուի հակառակորդ ուժերու միջեւ, բացի այն մէկէն, որ անոնք կը նկատեն կամ կը կոչեն «կարմիր գիծ»: Հայերուս պարագային՝ որեւէ սխալ ընկալում կամ սրբապղծում Հայոց ցեղասպանութեան այն կարմիր գիծն է, որուն առջեւ ծունկի կու գայ մեր ժողովուրդը իր մեծով ու փոքրով, ազգային ու կրօնական բոլոր հատուածներով: Ապրիլ 24-ին դէպի Միծեռնակաբերդ ուղղուող մեր ազգը եւ աշխարհի ամէն անկիւնի մէջ գէթ մէկ անգամ ազգովին համախմբուող մեր ժողովուրդը ՅԻՐԵՔ ՈՒ ԵՐԵՔ պիտի չնսեմանայ ուրանալով այն ուխտը, որ դարձ մը աւելի իր ՀԱԻԱՏԱՄՔԸ դարձուցած է: Այն ուխտն է, որ Փաշինեան ուշքի գալով ըսաւ. «Մեծ եղեռնը ոչ միայն անհերքելի է, դա մեր ինքնութեան մասն է, դա ուզելով-չուզելով չէ, չկայ դենց ուժ, չի կարող դա անել, դա ի՛մ, ձե՛ր, բոլորի՛ս արեան մէջ է, երակների մէջ է, եւ նման բան ասելը նշանակում է չճանաչել սեփական ժողովուրդի ինքնութիւնը»:

Փաշինեանի սայթաքումն ու զղջումի համազօր յաջորդող ճշդումը յուսանք, որ վերջ դնէ իր դէմ եղած մեղադրանքներուն, որոնք եղան գուլիցերիահայութեան հետ իր ունեցած հանդիպումէն ետք:

Լոս Անճելըսի «Մասիս» շաբաթաթերթի գովելի խմբագրականին եզրակացութիւնը կրկնելով մաղթենք, որ Փաշինեան «շարունակէ կեդրոնանալ մեր անկախ պետականութեան կայացման ու հզօրացման խիստ կարեւոր խնդիրներուն վրայ»:

### Քրեմլինի Համար՝ Դասեր Քաղելու Ժամանակը

#### Շարունակուած էջ 1-էն

մենք կը լռենք», կը գրէր Ռուս քաղաքագետը:

Նոյնանման կարծիք կը յայտնէ նաեւ Ռուսաստանի Պետական Դումայի պատգամաւոր Կոստանթին Զատուլիւնը ըսելով. «Երբ անհրաժեշտ էր, որ Ռուսաստանը աչք փակեր Ղարաբաղի պատերազմի, սադրանքներուն, յանցագործութիւններուն, խոցուած ուղղաթիւնին, այն ժամանակ եղան գործընկերային յարաբերութիւններ: Երբ անհրաժեշտ էին խողովակաշարային երթուղիներ անցկացնել, այդ ժամանակ մեզ կը շրջապատէին խնամքով եւ ուշադրութեամբ: Երբ Ատրայէյճանի եւ Հայաստանի միջեւ հակամարտութիւնը աւարտեցաւ այնպէս, ինչպէս աւարտեցաւ, Ատրայէյճանի ղեկավարութիւնը որոշեց օգտագործել ցանկացած պատրուակ՝ Ռուսաստանի նկատմամբ իր յատուկ վերաբերմունքը ցոյց տալու համար»: Զատուլիւնի միացան շարք մը այլ Ռուս պատգամաւորներ, պահանջելով որ Ռուսաստան դիմէ պատասխան քայլերու:

Այս բոլորով հանդերձ, լուռ են Քրեմլինի գլխաւոր խօսնակներ՝ Մետիտեւելը, Լաւրովը, Պեսքովը, Զախարովան եւ ուրիշները:

### Մաքրոն Վերահաստատած է

#### Շարունակուած էջ 1-էն

յաստանի ու Ֆրանսայի յարաբերութիւնները հասած են նոր մակարդակի:

Հանդիպման ընթացքին Հայաստանի եւ Ֆրանսայի ղեկավարները քննարկած են երկկողմ համագործակցութեան զարգացման շարք մը հարցեր, այդ շարքին՝ տնտեսութեան, ենթակառուցուածքներու, ճանապարհաշինութեան, ուժանիւթի, կրթութեան, զբօսաշրջութեան եւ այլ ոլորտներու մէջ համատեղ ծրագրերու իրականացման հեռանկարները:

Անդրադարձ կատարուած է Հայաստանի եւ Ատրայէյճանի միջեւ խաղաղութեան գործընթացին, սահմանազատման ուղղութեամբ ըն-

որոնք գրեթէ ամենօրեայ հերթականութեամբ մեղադրանքներ ու զգուշացումներ կը հնչեցնեն Հայաստանի հասցիին, որ պարզապէս կը փորձէ ապահովել իր երկրի սահմաններն ու տարածքային ամբողջականութիւնը ու իր ազգային շահերէն բխող որոշումներ կը կայացնէ, առանց հակառուսական հիստերիա ստեղծելու իր ժողովուրդին մօտ, ինչ որ ներկայիս կը կատարէ Ալիեւի իշխանութիւնը:

Այժմ մտածելու տեղի կու տայ թէ արդեօ՞ք Պաքու յոյսը կտրած է Ռուսաստանի օգնութեամբ «Զանգեզուրի միջանցքին» տիրանալու ծրագիրէն, ու չի վարանիր մի քանի աստիճանով ցած իջեցնել՝ երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող ռազմավարական ու դաշնակցային յարաբերութիւնները: Ի՞նչ որ ալ ըլլան Պաքուի հետապնդած նպատակները, ժամանակն է, որ Քրեմլինի ամենաբարձր օղակները վերաթելորեն իրենց նախկին քայլերը ու հասկնան, որ գործեցին աշխարհաքաղաքական մեծ սխալ՝ Ատրայէյճանը ընդունելով որպէս դաշնակից ու բարեկամ, որուն դիմաց զոհեցնելով Հայաստանն ու Հայ ժողովուրդը:

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

Թացող զարգացումներուն, ինչպէս նաեւ տարածաշրջանային հաղորդակցութեան ուղիներու ապաշրջափակման՝ «խաղաղութեան խաչմերուկ» նախագիծի շրջանակին մէջ:

Նիկոլ Փաշինեան ընդգծած է ՀՀ կառավարութեան հաւատարմութիւնը խաղաղութեան օրակարգին: Քննարկուած են նաեւ տարածաշրջանային նշանակութեան շարք մը այլ հարցեր:

Կողմերը միտքեր փոխանակած են Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեան հետագայ զարգացման հեռանկարներու, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ ժողովրդավարական բարեփոխումներու օրակարգի շարունակական յառաջմղման վերաբերեալ:

**Community Support Group**  
 For residents impacted by the Eaton & Palisades Fires

- Navigating our loss journey and healing together with grace, because **Hope + Resilience = Community**
- Group sessions facilitated by **Dr. Ani Karayan, PhD**
- **Tuesdays at 6:30pm starting Feb 4th**
- Drop-in, open group format sessions for a supportive communal experience
- **St. Gregory Church of Pasadena**  
2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107

Join us!  
 inthearmsofgrace.com

# Միջին Արեւելքը Իր Ներկայ Դիմագիծով Եւ ԱՄՆ-ի Նախագահ Տանըլտ Թրամի Դերակատարութիւնը Այդ Աշխարհամասին մէջ



## ՓԱՆՈՍ ԹԻԹԻՉԵԱՆ

Կը թուի թէ հայ ժողովուրդի լայն խաւերուն մօտ ներկայիս կը տիրէ անորոշ, սպասողական ու շփոթ վիճակ մը: Մեզի համար անհրաժեշտ է աննախապաշարօրէն եւ իրատեսական pragmatic վերաբերումով մօտենալ մեր առջեւ ներկայացող հիմնահարցերուն: Նախ եւ առաջ անհրաժեշտ է որ ճանչնանք շրջապատի երկիրներուն մէջ խմորուող հարցերը որոնք կրնան աղերս ունենալ Հայաստանի ապագային հետ: Սոյն յօդուածով մենք պիտի փորձենք ներկայացնել Միջին Արեւելքի ներկայ յարափոփոխ աշխարհաքաղաքական իրավիճակին պատկերը:

Նուազ քան մէկ ու կէս տարի առաջ, Ամերիկան արմատական քայլ մը պիտի առնէր, փոխադրելով իր ռազմական ուժերը Միջին Արեւելքէն դէպի Մայրագոյն Արեւելք, պաշտպանելու համար թալուանը Չինաստանի սպառնալիքներուն դէմ:

Միջին Արեւելքի յետագայ զարգացումները պիտի գային փաստելու, թէ Ամերիկան սխալ քայլ մը առեր էր իր հաշիւներուն մէջ: Քանզի Ռուսիան Միջին Արեւելք պիտի իջնէր իսկ Չինաստան իր առեւտրական կապերը պիտի գորացնէր Սէնտական Արաբիոյ հետ: Տուեալ կացութեան մէջ Ամերիկան

կարգը գործի գլուխ չանցած, իր համաձայնութիւնը տալու Նախագահ Պայտընի կողմէ իրագործուած զինադադարին: Ըստ այդ համաձայնութեան, որ կնքուած էր Համասի եւ Իսրայէլի միջեւ, իսրայէլացի պատանդները ազատ պիտի արձակուէին, ինչպէս նաեւ Իսրայէլի կողմէ բանտարկուած հազարաւոր պաղեստինցիներ: Այդ բոլորը պիտի գործադրուէին երեք փուլերով: Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու կարելի է ըսել որ ամէն ինչ գոհացուցիչ կերպով յառաջ կը տարուէր: Բնականաբար այդ բոլորը չէր կրնար տէքդի ունենալ առանց Նախագահ Թրամի հաւանութեան: Ասիկա լաւ սկիզբ մըն էր Նոպէլեան Մրցանակի տիրանալու իր փափաքին իրագործման ուղղութեամբ:

Նախագահ Թրամը նաեւ ուրիշ քայլի մը պիտի ձեռնարկէր շատերու մօտ գարմանք յառաջանելով: Ան անձնապէս կապ հաստատելով Յորդանանի եւ Եգիպտոսի կառավարական պետերուն հետ, բացէ ի բաց պիտի յայտնէր այն միտքը, թէ Կազախ պաղեստինցիները պէտք էր Յորդանան եւ Եգիպտոս փոխադրել եւ այդ ձեւով վերջնականապէս լուծել Կազախի պաղեստինցիներուն հարցը: Նախագահ Թրամի այդ ծրագիրը վճռականօրէն պիտի մերժուէր Յորդանանի եւ Եգիպտոսի կողմէ, ամէ-

հարաւէն դէպ հիւսիս քալելով իրենց բնակավայրերը սկսան երթալ: Աներեւակայցի տեսարան մը զոր տեսանք հեռատեսիլի վրայ: Մարդկային գետ մը՝ կարծէք մաքունիսական քաղաքական ուժով տէպի հայրենի տունը հոսող: Այս երեւոյթը ինքնին խօսուն պատասխան մըն էր Կազախի Պաղեստինցիներ իր տունէն արտաքսելու փորձին:

## ԻՆՉ Է ՆԱԽԱԳԱՀ ԹՐԱՄԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Թրամի նշանաբանն է «Ամերիկան Նախապատիւ» (America First): Այդ նպատակին հասնելու համար պէտք է ռազմական եւ տնտեսական ուժ ամբարել: Այդ ուժն է որ կրնայ խաղաղութիւն հաստատել ներկայ աշխարհին մէջ: Նախագահ Թրամը համաշխարհային խաղաղութիւն ձեռք բերելու համար երեք փորձառակելիք մարզեր ունի: Ուքրանիա, Միջին Արեւելք եւ Չինաստան:



Ուժի գերակայութեամբ: Մենք մեր ներկայ յօդուածով պիտի ծանրանանք Միջին Արեւելքի վրայ: Այդ աշխարհամասի բանալի հարցերուն եւ խմորուող զարգացումներուն: Ժամանակը ցոյց պիտի տայ որ Միջին Արեւելքի յետագայ ձեւաւորումին (reshape) մէջ տիրապետող դեր պիտի խաղայ Նախագահ Թրամը: Ներկայիս աւելի քան երբէք Միջին Արեւելքի մէջ հսկայ համաշխարհային (global) թէ շրջանային հետեւանք ունեցող իրադարձութիւններ տեղի կ'ունենան: Պատմութեան անիւը արագ կը շարժի: Ասացուածք մը կայ որ կ'ըսէ թէ «կան շաբաթներ որոնք տասնամեակներու պէս կ'անցնին»: Որքան կը պատշաճի այդ ներկայ Միջին Արեւելքին: Շարան մը հարցեր կան որոնք վերանայումի կը կարօտին: Կազախի, Իսրայէլի, Սուրիոյ, Իրանի, Թուրքիոյ եւ Ռուսիոյ վերաբերեալ:

ընթացքին տապալեցին Պաշար Ասատի իշխանութիւնը: Պաշար Ասատ իր ընտանիքով Ռուսիա ապաստանեցաւ:

Որո՞նք էին այն ըմբոստ խմբաւորումները որոնք կը գործէին Խոլիպ եւ այլ գանազան շրջաններ Սուրիոյ արեւմտեան շրջաններուն մէջ: Անոնք արագօրէն գրաւելէ ետք Հալէպ, Համա եւ Դամասկոս, Դամասկոսի մէջ հաստատեցին ժամանակաւոր իշխանութիւն մը, Ահմատ էլ Շարաա կոչուած ըմբոստ առաջնորդին ղեկավարութեամբ, որ նախագահ նշանակուեցաւ: 2024-ի Դեկտեմբերին, ըմբոստ բոլոր հոսանքները ձուլուեցան պետական նոր կառույցին մէջ, Հայ աթ Թահրիր էլ Շամ (Hayat Tahrir El Sham-HTS) նախկին Քալիտայի (Kaeda) ղեկավար ձիհատիսթ, ան իսկոյն ինքզինք պիտի վերափոխէր որպէս գործնապաշտ ամերիկահաճոյ կերպար, խոստանալով որ Սուրիոյ բոլոր հատուածները, ներառեալ փոքրամասնութիւններ որոնք շարքին քրիստոնեաները, ազատութիւն պիտի ունենային պահպանելու իրենց համայնքային (ethnic) էութիւնը:

Գործնական գետնի վրայ, (de facto) ի՞նչ էր ուժերու պատկերը: Սուրիոյ Հիւսիս-Արեւմտեան մասը Բօճաւա (Rojava) կոչուած, գլխաւորաբար քրտական ինքնավար շրջան մըն է, Ամերիկայի յարող: Թուրքիա Բօճաւան կը նկատէ մաս՝ քրտական PKK ահաբեկչական խմբաւորումին: Հիւսիս-Արեւելեան շրջանը, Իրաքի կից, Քիւրտեր ինչպէս նաեւ Isis-ի հետեւորդներ կը գործէին: Մնացեալ շրջանները՝ այսպէս կոչուած օրինաւոր իշխանութեան ձեռքն էին: Ուստի Սուրիան բազմազան բնոյթով, իրարու հակադիր հոսանքներու տիրապետութեան տակ երկիր մըն է: Երկիր մը ուր վերջին խօսքը չէ ըսուած տակաւին: Շփոթ եւ անորոշ կացութիւն: Ո՞վ պիտի վերակազմէ ազգային բանակը, ո՞վ մաս պիտի կազմէ անոր, Ո՞վ պիտի ֆինանսաւորէ աւերակներու տասնեակ պիլիոն տոլարի հասնող վերաշինութիւնը: Ու՞ր եւ որո՞ւ կողմէ պիտի ֆինանսաւորուին տասնեակ միլիոնաւոր գաղթականները Թուրքիայէն, Լիբանանէն, Յորդանանէն եւ այլ երկիրներէ որոնք երկիր կ'ուզեն վերադառնալ: Սուրիան անորոշ ապագայ մը կը դիմագրաւէ:

Սուրիան իր աշխարհագրական դիրքով ու աշխարհաքաղաքական (geopolitical) կարեւորութեամբ կեդրոնական դերք ունեցող երկիր մըն է: «Բոլոր ճամբաները Դամասկոսէն կ'անցնին:»



հարկ էր որ ցոցաբերէր որոշ զգացողութիւն Կազախի պաղեստինցիներուն կրած դժբախտութեան նկատմամբ՝ Իսրայէլի բանակին կործանարար գործողութիւններուն պատճառաւ: Առաւել ըլլալով Ուաշինկթըն պէտք էր որ շօշափելի քայլերու դիմէր կաշկանդելու համար Իրանի գաշնակիցներուն՝ Հըզպալլա, Համաս, Սուրիա, ինչպէս նաեւ Եմէնի Հուժիներու հակա-Իսրայէլեան եւ հակա-ամերիկեան ռազմական գործողութիւնները: Այսպէս կոչուած վատահալ (Proxy) ուժերու կողմէ:

Ահա այսպիսի որոշիչ հանգրուանի մը, Ամերիկայի Նորընտիր Նախագահ Տանըլտ Թրամը հանդէս կու գար տակաւին իր վարչա-

նավճռական խօսքերով: Արաբական աշխարհը նոյնպէս կտրուկ կերպով մերժեց այդ առաջարկը: Արաբները շատ լաւ հասկցած էին որ Կազախի պաղեստինցիները տեղահան ընելու առաջարկը, պարզապէս բերանէ սահած խօսք մը չէր, այլ երկար ատենէ ի վեր Թրամի եւ Իսրայէլեան ծայրայեղ աջակողմեան ու կրօնամոլ կառավարութեան միջեւ համաձայնութիւն մըն էր: Յետին նպատակ ունենալով Արեւմտեան Ափը ( West Bank) Իսրայէլի կցելու:

Շատ խօսուն երեւոյթ մը: Կազախի պաղեստինցիները օգտուելով Համաս-Իսրայէլ զինադադարի համաձայնութենէն, հարիւր հազարաւոր Պաղեստինցիներ երկրին

## ՍՈՒՐԻՈՅ ԲՈՆԱՊԵՏ ՊԱՇԱՐ ԷՆ ԱՍԱՏԻ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Հաֆէզ եւ Պաշար Ասատ, հայր ու տղայ, այն բռնապետներն էին որոնք տիրապետութեան տակ Սուրիան արիւնքամ վիճակի մատնուեցաւ աւելի քան կէս դար: Անոնց տապալումով Միջին Արեւելքի մէջ նոր էջ մը բացուեցաւ: Բռնապետութիւն, բանտերու մէջ տարբեր տեսակի չարչարանք, cronism, թմրեցուցիչներու շուկայ, սեւ շուկայ, եւայլն, հոն հասցուցեր էին երկրին գեղծարարութիւնը (corruption), որ 300 ըմբոստներ Հայկէպը գրաւեցին առանց ընդիմութեան: Հալէպ, Համա եւ միջեւ Դամասկոս, վարչակարգին ընդիմադիր ուժերը մի քանի օրերու

## ԻՆՉ Է ԱՀՄԱՏ ԱՆ ՇԱՐԱԱԻ ՊԱՐԱԳԱՆ - ԿԱՐԵԼԻՒ Է ԻՐԵՆ ՎՍՏԱՀԻԼ

Գաղափարական եւ դաւանական առումով Ահմատ ալ Շարաա երեւութապէս դէպի գործնապաշտութիւն (pragmatism) կը յարի: Լիբանան կը ցանկայ որ իր դրացի երկիրը շուտով բնականոն հունի մէջ մտնէ որպէսզի շուրջ մէկուկէս միլիոն սուրիացի գաղթականներ Լիբանանէն իրենց երկիրը վերադառնան:

## ԹՈՒՐԳԻԱ Թուրքիոյ ներկայ վարչակար-

# Շնորհահանդես-Գինեձօն Պետրոս Անսրեանի «Առանց Պայուսակի Դիւանագէտը» (Diplomat Without Portfolio) Գիրքին



Նախագահութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ

քերուն ու գաղթին, մանաւանդ լուսարձակի տակ առնելով 1983 Ապրիլ 18-ին Պէյրութի Ամերիկ-



Բարձրաշնորհ Տէր Յովնան Սրբ. Արք. Տէրտէրեանի, Հինգշաբթի 30 Յունուարի Երեկոյեան Առաջնորդարանէն ներս տեղի ունեցաւ Տիար Պետրոս Անսրեանի «Առանց պայուսակի դիւանագէտը» (Diplomat Without Portfolio) (Newman Springs հրատարակչութիւն, Լոս

եան դեսպանատան պայթումի հովուներն ու իրարայաջորդ պատմական դէպքերը: Պայթումին զոհ գացին վաթսուն մարդիկ, որոնցմէ տասնըութն Ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտներ էին: Ահուշի պայթումին վերապրողներէն է Պետրոս Անսրեան, որ այդ տարի-



Անճելոս, 31 յուլիս 2024) գիրքի գինեձօնը: Հանդիսութիւնը վարեց Բժիշկ Գրիգոր Սիմոնեան, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ «Առանց պայուսակի դիւանագէտը» (Diplomat Without Portfolio) գիրքի հրատարակութեան կարեւորութեան: Այնուհետեւ, Անի Եփրեմեան հանդէս եկաւ արտասանութեամբ, որուն յաջորդեց երաժշտական կտորներու ներկայացում մասնակցութեամբ Daniel Eitan-ի եւ Sam Cooper-ի: Ապա իրաւաբան Ռուբէն Աւարեան ներկայացուց գիրքին ենթավերնագրերու բովանդակութիւնը: Ան Անդրադարձաւ գիրքին մէջ տեղ գտած Լիբանանի պատերազմին հետեւանքով սարսափելի դէպ-

ներուն կը պաշտօնավարէր Ամերիկեան դեսպանատան մէջ: Հանդիսութեան ընթացքին խօսք արտասանեց նաեւ Բժիշկ Վարդան Թաշճեան: Գինեձօնի յայտագիրը կ'ընդգրկէր (Yes no Visa) տեսաերիզի ներկայացումը: Գիրքի ներկայացումէն ետք խօսք առաւ գիրքի հեղինակ Տիար Պետրոս Անսրեան, որ շնորհակալութիւն յայտնեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձրաշնորհ Սրբազան Հօր հանդիսութեան հովանաւորութեան համար, ինչպէս նաեւ երախտիքի խօսքեր ուղղեց հանդիսութեան բոլոր մասնակիցներուն ու ներկաներուն: Ապա ան ամփոփ գիծերու մէջ

ներկայացուց գիրքին մէջ տեղ գտած իր կենդանի վկայութիւնները, որոնք կը վերաբերէին Ամերիկեան դեսպանատան պայթումի հանգամանքներուն ու հետեւանքներուն: Հուսկ, փակման խօսքով ելոյթ եկաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի

Պետրոս Անսրեանի քաջարտութիւնը, որ ապրեցաւ Ամերիկեան դեսպանատան ցաւալի պայթումին սարսափելի պահերը եւ հաւատքով ու իմաստութեամբ յաղթահարեց կեանքի բազում զժուարուցիւններ ու արհաւիրքներ: Սրբազանը այս առթիւ բարձր



Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Յովնան Արք. Արք. Տէրտէրեանը, որ շնորհաւորեց Պետրոս Անսրեանը «Առանց պայուսակի դիւանագէտը» (Diplomat Without Portfolio) գիրքի հրատարակութեան առիթով: Սրբազանին բառերով, գիրքը կը պատմէ Պետրոս Անսրեանի կեանքի ուղեւորութիւնն ու փորձառութիւնը եւ լիբանանահայութեան կեանքը պատերազմի տարիներուն: Սրբազանը վեր առաւ

գնահատեց Տիար Պետրոս Անսրեանի ծառայութիւնն ու նուիրումը Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմէն ներս: Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ «Առանց պայուսակի դիւանագէտը» (Diplomat Without Portfolio) գիրքի գինեձօնը, ապա Տիար Պետրոս Անսրեան իր գիրքերը մակագրեց ներկաներուն: Ընթացքին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

## Աւարտին Հասած է Հայ Ամերիկեան Թանգարանը Տանիքի Եւ Երկրորդ Հարկի Կառուցումը



Հայ Ամերիկեան Թանգարանն ու Մշակութային կեդրոնը իր շինարարական աշխատանքներուն մէջ հասած է յաջորդ մեծագոյն հանգրուանին՝ յաջողութեամբ աւարտելով շէնքի տանիքին եւ երկրորդ յարկին կառուցումը: Նախագիծը շարունակաբար կը զարգանայ, եւ փետրուար ամսուան ընթացքին պիտի կատարուի շրջանակման (framing) գործընթացը: Այս վերջին յաջողութիւնը թանգարանին զարգացման համար նշանակալի քայլ մըն է, որ մշակութային ու կրթական այս կեդրոնը աւելի մօտ կը բերէ իր լրումին: Շրջանակման փուլով, թանգարանի կառուցուածքը տեսանելի պիտի դառնայ, ցոյց տալով անոր իւրայատուկ տեսլականը, որ նուիրուած է հայ ժառանգութիւնը, պատմութիւնը եւ ներգրումները պահ-

պանելուն ու արժեւորելուն: Շրջանակման փուլը պիտի ճշդէ թանգարանի ներքին դասաւորումը, կենդանացնելով ճարտարապետական տեսլականը՝ բարձրացող պատերով եւ հայկական ժառանգութիւնը ու ժամանակակից նորարարութիւնը արտացոլող մանրամասնութիւններով: Առաջիկայ ամիսներուն, ծրագիրը պիտի յառաջանայ՝ արտաքին յարդարանքով, ներքին յատկազօնով ու մշտական ցուցադրութեան մշակմամբ: Երբ շինարարութիւնը աւարտի, Հայ Ամերիկեան Թանգարանը պիտի ծառայէ իբրեւ աշխոյժ կեդրոն՝ կրթական ծրագիրներու ու ձեռնարկներու համար, ապահովելով մշտական տարածք: Հայոց պատմութիւնը, մշակույթը եւ ներգրումները յարգելուն համար:

# Massis Weekly

Volume 45, No. 6

Saturday, February 15 2025

## France Reaffirms Strong Support for Armenia's Territorial Integrity Prime Minister Nikol Pashinyan Meets with President Emmanuel Macron at the Élysée Palace

PARIS — French President Emmanuel Macron reaffirmed his country's strong support for Armenia's territorial integrity when he held talks with Prime Minister Nikol Pashinyan in Paris on Monday.

The two leaders discussed bilateral ties and the Armenian-Azerbaijani conflict, according to official readouts of the talks held on the sidelines of the Artificial Intelligence Action Summit taking place in the French capital.

"The Head of State reiterated France's full support for the normalization of relations between Armenia and Azerbaijan as well as the signing of a peace treaty in accordance with international law," read a statement released by the presidential Elysee Palace. "He also reiterated France's determination to support the territorial integrity and sovereignty of Armenia as well as the aspirations of the Armenian people for peace, security and democracy."

The statement said Macron and Pashinyan "agreed to continue the development of cooperation projects between France and Armenia, particularly in the fields of energy, defense and transport." Pashinyan was cited by his press office as saying that French-Armenian relations have



"reached a new level" in the past year.

Prime Minister Pashinyan expressed gratitude for the warm hospitality and highlighted that 2024 has been a highly dynamic year for Armenia-France relations. He noted that numerous meetings have taken place between the leaders and government agencies of both countries, maintaining regular communication, and that Armenia-France relations have now reached a new level.

Pashinyan's office said the parties exchanged views on the prospects

for further development of Armenia-European Union cooperation and the continued advancement of Armenia's democratic reform agenda, as stated in the official announcement.

France, which is home to an influential Armenian community, has emerged in recent years as Armenia's leading Western backer and supplier of weapons. The two countries have signed a series of contracts for the delivery of French weapons to the Armenian military, prompting strong condemnation from Azerbaijan.

## PM Pashinyan Meets with Vice President JD Vance at the White House

WASHINGTON, DC — Prime Minister Nikol Pashinyan met with US Vice President JD Vance late on Thursday at the end of a four-day visit to Washington.

Prime Minister Pashinyan's press office said the two men discussed U.S.-Armenian relations and unspecified issues on the "regional agenda."

Pashinyan considers his meeting with Vance to be very important and productive.

According to him, the meeting was the final event of his visit to the U.S. and was organized spontaneously during the trip.

"The meeting lasted quite a long time. It took place in a 1+3 format, meaning a tête-à-tête discussion. Members of the delegation participated in the meeting. On our side, Armenia's ambassador to the U.S., the head of the foreign relations department of the government staff, and my press secretary were present. A detailed and comprehensive discussion took place. Moreover, it happened in a very dynamic environment, which we highly appreciate," said the Prime Minister, adding that the interest in holding such a meeting developed mutually over time.


## Iran Opposes the So-Called "Zangezur Corridor," Calling It Harmful to Both Armenia and Iran – Mehdi Sobhani

YEREVAN — The so-called "Zangezur Corridor" poses a threat to both Armenia and Iran, Iranian Ambassador to Armenia Mehdi Sobhani stated during a press conference today in Yerevan. He emphasized that Tehran strongly opposes any route that operates under a "corridor logic."

"Only Armenia and Iran share the same perspective on the so-called 'Zangezur Corridor.' Iran is the only country in the region standing firmly with Armenia against it," Sobhani noted. "There is no disagreement between Iran and Armenia on this matter—we are completely aligned in our stance."

During his press briefing, Sobhani repeatedly clarified that Iran is not against unblocking regional transportation routes. However, he insisted that any such developments must respect the sovereignty and territorial integrity of the states involved.

"We support the unblocking of roads in Armenia, but this must be done under the framework of national sovereignty and territorial integrity. We oppose any road that follows the 'corridor logic,'" he stressed.



The Iranian ambassador made it clear that Iran is firmly against any initiative that could lead to changes in the Armenia-Iran border. Regarding the so-called "Zangezur Corridor," he stated that Iran will not engage in negotiations or compromises with any country, as it directly concerns Iran's national security.

When asked whether Iran has disagreements with Russia on this is-

Continued on page 3

## Armenian Caucus Leadership Addresses Letter to Secretary Rubio Highlighting Priorities For Armenian People

ARMENIAN CAUCUS CO-CHAIRS  
SEND LETTER TO SECRETARY RUBIO  
HIGHLIGHTING PRIORITIES ON ARMENIA



Representative  
Frank Pallone  
(D-NJ)



Representative  
Gus Bilirakis  
(R-FL)



Representative  
Brad Sherman  
(D-CA)



Representative  
David Valadao  
(R-CA)

WASHINGTON, D.C. – Armenian Caucus Co-Chairs Reps. Frank Pallone, Jr (D-NJ), Gus Bilirakis (R-FL), David Valadao (R-CA), and Brad Sherman (D-CA), addressed a letter to newly appointed Secretary of State Marco Rubio on priorities relating to Armenia and the Armenian people, reported the Armenian Assembly of America.

Primarily, the letter urged the U.S. to hold Azerbaijan accountable for its war crimes and ethnic-cleansing of Nagorno-Karabakh by enforcing Section 907 of the FREEDOM Support Act, applying Global Magnitsky sanctions, and denying EXIM Bank financing of dual-use sales

Continued on page 3

## Prime Minister Pashinyan Delivers Lecture at Georgetown University



WASHINGTON, DC — Armenian Prime Minister Nikol Pashinyan visited Georgetown University in Washington, D.C., where he was welcomed by Professor Joel Hellman, Dean of the Edmund A. Walsh School of Foreign Service.

During his visit, Prime Minister Pashinyan delivered a lecture attended by students and faculty members specializing in political science, international relations, and security studies.

In his speech, the Prime Minister discussed the development and strengthening of democracy in Armenia, the progress of ongoing reforms, and the current regional situation, particularly the challenges surrounding Armenia and the measures being taken

to address them. He emphasized the Armenian government's commitment to reinforcing democratic institutions and fighting corruption, highlighting the importance of institutional capacity-building in this context.

Pashinyan also spoke about Armenia's efforts to normalize relations with Azerbaijan and Turkey, reiterating his government's dedication to a peace agenda. He introduced the "Crossroads of Peace" initiative, which aims to reopen regional communication routes.

During the event, the Prime Minister answered several questions from students and faculty, engaging in discussions on key regional and international issues.

## Armenia and India's Joint Efforts Aim Beyond Strengthening Defense Capabilities – DM Papikyan



NEW DELHI — Armenian Defense Minister Suren Papikyan, who is on a working visit to India, participated in the "Aero India" exhibition on February 11. As part of the event, he attended the Defense Ministers' Roundtable on the theme "Building Resilience Through International Defense and Global Engagement."

In his speech, Minister Papikyan emphasized that Armenia and India's joint efforts are directed not only toward enhancing their countries' defense capabilities but also toward ensuring international and regional security, peace, and stability.

The Armenian Defense Minister also presented Armenia's perspectives

on regional security issues, as well as the "Crossroads of Peace" initiative introduced by the Armenian government.

Additionally, Papikyan held a discussion with the Chief of Defense Staff of the Indian Armed Forces, General Anil Chauhan.

Minister Papikyan also held a meeting with the Minister of Defense of India, Rajnath Singh.

The parties commended the current state of bilateral cooperation and explored avenues for further expansion of defense cooperation between Armenia and India.

Continued on page 3

## Former Karabakh Army Chief Jalal Harutyunyan Sentenced to 5.5 Years in Prison

YEREVAN — An Armenian court sentenced a former commander of Nagorno-Karabakh Defense army Lieutenant-General Jalal Harutyunyan to five and a half years in prison on Friday after holding him responsible for one of the military setbacks suffered during the 2020 war with Azerbaijan.

Harutyunyan was indicted in September 2022 over the capture by Azerbaijani troops of the frontline positions of a Karabakh Armenian artillery unit on October 12, 2020. Armenian law-enforcement authorities say it was the result of inaccurate information provided by him to the unit. The latter lost at least 20 soldiers and 8 howitzers on that day.

The court of first instance of Armenia's Syunik province gave the prison sentence to Harutyunyan three weeks after convicting him of "careless attitude towards military service." The 50-year-old general denies the accusation. His lawyers said he will appeal against the verdict.

Armenia's Investigative Committee also brought in 2022 another accusation against Harutyunyan stemming from an Armenian counteroffensive against advancing Azerbaijani forces launched on October 7, 2020 ten days after the outbreak of large-scale fighting. Its failure facilitated Azerbaijan's subsequent victory in the six-week war.

Investigators said at the time that Harutyunyan ordered two army units to launch an attack southeast of Karabakh despite lacking intelligence



and the fact that they were greatly outnumbered by the enemy and had no air cover. A prosecutor overseeing the inquiry dropped this charge a year later, however.

Harutyunyan was seriously wounded in an Azerbaijani missile strike on October 26, 2020. He was appointed as head of an Armenian military inspectorate after recovering from his wounds.

Harutyunyan's successor as Karabakh army commander, Mikael Arzumanyan, was arrested in August 2022 on different criminal negligence charges. In particular, the Investigative Committee blamed him for the November 2020 fall of the strategic Karabakh town of Shushi. Arzumanyan, who remains under arrest, strongly denies this accusation. Unlike him, Harutyunyan was not held in detention before or during his trial.

## Plenary Session of the AI Action Summit Held in Paris



PARIS — Armenian Prime Minister Nikol Pashinyan attended the plenary session of the Artificial Intelligence Summit in Paris. The Prime Minister and other high-ranking guests were welcomed by France's Minister of Foreign Affairs, Jean-Noël Barrot.

The event was attended by French President Emmanuel Macron, Indian Prime Minister Narendra Modi, U.S. Vice President James David Vance, United Nations Secretary-General António Guterres, European Commission President Ursula von der Leyen, Canadian Prime Minister Justin Trudeau, and several other world lead-

ers and government officials.

Following the plenary session, a group photo session was held for the summit participants.

During the summit, Prime Minister Pashinyan held brief discussions with international partners. In particular, he exchanged views with European Commission President Ursula von der Leyen on the future development of Armenia-European Union cooperation.

Additionally, Pashinyan met with the Secretary-General of the International Organization of La Francophonie, Louise Mushikiwabo, and other international partners.

## Armenian American Museum Completes Roof Deck and Second-Level Concrete Pour



GLENDAL — The Armenian American Museum and Cultural Center of California has reached another major milestone in its construction progress with the successful completion of the concrete pour for the roof deck and second level of the building. The project continues to move forward, with framing scheduled to take place throughout the month of February.

The latest achievement marks a significant step in the museum's development, bringing the cultural and educational center closer to completion. As framing progresses, the structure of the museum will begin to take shape, showcasing the vision of a unique institution dedicated to preserving and celebrating Armenian heritage, history, and contributions.

"We are excited to share this latest milestone with our community," said Executive Chairman Berdj Karapetian. "With each phase of construction, we are one step closer to opening the doors of the Armenian American Museum and fulfilling our mission of education, engagement, and cultural enrichment."

The framing phase will define the museum's layout, bringing the architectural vision to life with towering walls and intricate details that reflect Armenian heritage and modern innovation. In the months ahead, the project will progress with exterior finishes, interior installations, and Permanent Exhibition development.

Once completed, the Armenian American Museum will serve as a vibrant space for educational programs, and events, providing a permanent home to honor Armenian history, culture, and contributions.

The museum's mission is to promote understanding and appreciation of America's ethnic and cultural diversity by sharing the Armenian American experience. The vision is a cultural campus that enriches the community, educates the public on the Armenian American story, and empowers individuals to embrace cultural diversity and speak out against prejudice. The cultural and educational center is currently under construction in the museum campus at Glendale Central Park.

## Iran Opposes "Zangezur Corridor"

Continued from page 1

sue, Sobhani responded:

"We have clearly conveyed our stance to Russia and other countries. We oppose any road under international control, as well as any initiative that alters existing borders or leads to geopolitical shifts. We have made this explicitly clear and will not consider any country's concerns in this matter. Some nations have attempted to spread doubts about Iran's stance, claiming that we have compromised on Zangezur. However, Zangezur is directly tied to our national security, and we remain steadfast in our position—no matter which country is involved."

### Armenia Assures Iran: U.S. Strategic Partnership Document Not Targeted at Tehran

Armenian authorities have made it clear to Iran that the recent strategic partnership document signed between Yerevan and Washington is not directed against Tehran, Iranian Ambassa-

sador to Armenia Mehdi Sobhani stated on Thursday.

During a press briefing, Sobhani emphasized that Armenia has assured Iran it will take no actions that could harm Armenian-Iranian relations or jeopardize Tehran's interests.

"There is a strong mutual understanding between the Armenian and Iranian authorities on this matter," he said. "Both sides recognize that our bilateral relations are developing in a way that benefits the peoples of both nations."

This shared perspective, according to Sobhani, continues to strengthen the partnership between Tehran and Yerevan. Despite ongoing U.S. pressure on Iran, he noted that the two countries have consistently maintained and developed their relations.

This mutual understanding, Sobhani noted, allows strengthening bilateral relations.

In his assessment, against the background of the maximum pressure of the United States on Iran, Tehran and Yerevan have always managed to develop relations.

## President Trump Picks Michael Kavoukjian as Next U.S. Ambassador to Norway

WASHINGTON, DC — U.S. President Donald Trump has appointed Michael E. Kavoukjian as the next United States Ambassador to the Kingdom of Norway.

"I am pleased to announce that Michael E. Kavoukjian will serve as the next United States Ambassador to the Kingdom of Norway", Trump announced on his own social media platform, Truth Social.

Kavoukjian is a lawyer and former CIA officer. The New York Times also points out that he has donated a lot of money to the Republican Party. In 2024, Kavoukjian donated a whopping \$700,000 to Trump's campaign apparatus.

Trump writes that "Michael is a brilliant attorney, who currently



serves as a Senior Partner at White & Case, where he has led complex commercial litigation teams around the World."

## Armenian Caucus Leadership Addresses

Continued from page 1

to Azerbaijan, emphasizing that "a durable and dignified peace between Armenia and Azerbaijan requires strict accountability and must be founded upon the collected and protected return of Armenians to their indigenous Nagorno-Karabakh homeland."

Caucus Members urged the State Department to remain engaged in the peace process, help secure Armenia's territorial integrity, end the blockade by Turkey and Azerbaijan, and facilitate better regional trade and transportation links, as well as a "final agreement [that] must secure the release of all POWs and hostages, including Nagorno-Karabakh's political leaders – who are unjustly detained in Azerbaijan – and safeguard ancient Armenian cultural sites in Nagorno-Karabakh and elsewhere in the region that are under immediate threat."

Highlighting the geographic and political challenges Armenia faces as a landlocked country blockaded by Turkey and Azerbaijan, the letter noted that these have served as obstacles for Armenia to fulfill its economic potential.

"The United States has an incredible opportunity to shape the future of the region by advancing Armenia's energy security and economic resilience aligned with its "Crossroads of Peace" vision for sustainable peace," the letter stated. "Investing in this transition will allow Armenia to fulfill its goal of diversifying its energy production and pivoting away from Russian energy and trade dependence."

Referring to Armenia's security, the letter requested that the State De-

partment build on defense engagements with Armenia, develop Armenia's border security capabilities, and "consider the Armenian government's outstanding request for purely defensive equipment and training to protect its territorial integrity, including anti-aircraft and anti-drone equipment and the ability to guard its borders, which is "critical at a time when it faces continued threats by Azerbaijani troops stationed in its sovereign territory and violent rhetoric from President Ilham Aliyev."

Other issues of concern in the letter included the challenges facing the Armenian community in Syria as well as the Armenian Quarter in Jerusalem, "a treasure of global Christian heritage in the Holy Land since the 4th Century."

Caucus Members offered congratulations to Secretary Rubio on his new role and expressed hope for collaboration during the 119th Congress regarding bipartisan priorities relating to Armenia, particularly building off of the strategic partnership between Armenia and the U.S. signed on January 15, 2025, an agreement that "reflects the efforts made by a broad bipartisan coalition of Members of Congress who have cultivated this important bilateral relationship across several Administrations," and the "promise Armenia shows as a reliable American partner in the South Caucasus."

The letter to Secretary Rubio concluded: "We stand ready to work with you to craft a policy in the South Caucasus region that is consistent with U.S. national security, universal principles of human rights, and our democratic values."

## Armenia and India's Joint Efforts

Continued from page 2

Additionally, the Ministers exchanged views on regional and international security issues.

The Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia to India Vahagn Afyan and the Chairman of the Military-Industrial

Committee of the Ministry of High-Tech Industry Aram Jivanyan attended the meeting.

According to "The Times of India," citing its sources, Armenia, along with the United States and France, became one of the largest importers of Indian defense products in the 2023-2024 financial year.

## New Book by Hasmik Khalapyan: “The Armenian Women’s Movement in the Late Ottoman Empire: Modernity, Nationalism and Gender”


LONDON/NEW YORK—I. B. Tauris, an imprint of Bloomsbury Publishing, has announced the publication of Dr. Hasmik Khalapyan’s *The Armenian Women’s Movement in the Late Ottoman Empire: Modernity, Nationalism and Gender*. The book is part of the series *Armenians in the Modern and Early Modern World* edited by Bedross Der Matossian (University of Nebraska, Lincoln).

The last decades of the Ottoman Empire saw heated debates about and changes to the role of women in society. This book analyses the history of the women’s movement among Ottoman Armenians. Examining debates on the role of women in the Armenian context, Armenian women’s access to education, work and marriage rights, it reveals how women were empowered by nationalist discourses and the wider movement for reform in the empire, and the ways these limited or broadened women’s activism. Drawing from a wide array of archival primary source material, it provides a comprehensive and comparative analysis of changes to the socio-economic, political, cultural status of Ottoman Armenian women from end of the Tanzimat period to the outbreak of World War I.

Khalapyan commented on the book, saying, “I am very happy that my research project of many years has materialized in this volume. Women’s history has been an essential part of global scholarship for many years, and I am thrilled that this book, dedicated to the history of the Armenian women’s movement in the Ottoman Empire, will find its place within that broader body of global women’s history.”

According to Khalapyan, the Armenian women’s movement in the late Ottoman Empire emerged as a complex interplay between national, imperial, and European forces, where women both shaped and were shaped by the evolving nationalist and modernist ideals of their time. Amid the debates surrounding the “New Nation” and the cultural, legal, economic, and social transformations sweeping the Empire, Khalapyan illustrates how women navigated the tension between tradition and modernity, actively contributing to nationalist projects. They did so not only by advocating for their rights within existing reforms but also by forging new pathways in education, social work, employment, and family structures.

“It has been my intention to show that women’s activism was inextricably tied to both local and global contexts, marked by the push and pull of European influence, Ottoman policies, and the national aspirations of the Armenian people,” she said. She continued, “Through a nuanced examination of these intersecting forces presented in the book, I hope my readers will see the multifaceted nature of Armenian modernity and gain a richer understanding of the complex dynamics that shaped the Armenian community and



the women who played pivotal roles in its transformation.”

“This is an outstanding study of the history of the Armenian women’s movement in the Ottoman Empire, a topic that has long remained marginalized,” said Der Matossian, editor of the series. “Khalapyan has successfully woven the history of the movement by situating it within the global, regional, and local contexts of women’s movements.”

### Reviews

“Khalapyan’s examination of Armenian feminist writers narrates the intertwined histories of Ottoman Turks and Armenians. The writers she taps across five languages were central to the rise of Armenian national consciousness in the late Ottoman Empire. A much-needed manuscript in the field, it situates Ottoman Armenian feminism within the broader global movements for women’s liberation.” - Elyse Semerdjian, Professor, Clark University, US

“Meticulously researched through Armenian, Turkish, French and Russian sources, this most impressive book traces the historical emergence of the Armenian women’s movement by triangulating Europe (modernity), the Ottoman Empire (imperial state), and its colonial subjects (Armenian community). The empirical focus on local dynamics reveals three endeavors that actualize the new emerging Armenian womanhood: i) taking care of the nation through organized charity and education; ii) campaigning for paid labor and a job market for women; iii) improving marriage and the family. Theoretically, the author cogently demonstrates how social movements negotiate local, national and global conditions and how women’s movements in particular undergird these negotiations. A must read for those interested in how women imperial subjects employ their agency to study the intersection of history, modernity, and empire as Ottoman Armenian women do.” - Fatma Müge Göçek, Professor, University of Michigan, USA

“An important contribution to our understanding of the gender politics permitting Armenian feminists to navigate extremely troubled waters!” -

## AUA to Hold Celebratory Luncheon Honoring Elizabeth Agbabian



LOS ANGELES — The American University of Armenia (AUA) is pleased to host a special luncheon to celebrate Elizabeth Agbabian, a visionary whose contributions to AUA, especially during the University’s formative years, have left a lasting impact. The event, titled “A Legacy of Grace: Honoring Elizabeth Agbabian,” will be held on Saturday, March 1, 2025, at 11:30 a.m., at the California Club in Downtown Los Angeles.

Since AUA’s inception, Elizabeth unwaveringly stood by her husband, AUA’s co-founder and founding president, Dr. Mihran Agbabian, and contributed her time and efforts to continually promote the University to the Diaspora community. Her devotion to the institution has inspired many, and together with her family, she has played a pivotal role in shaping AUA into the thriving beacon of academic excellence it is today in Armenia.

## Dr. Narine Margarian Presents a Lecture on the Fate of Armenian Genocide Orphans at Haigazian University

BEIRUT- As part of its 70th-anniversary celebrations, Haigazian University, in collaboration with the Armenian Genocide Museum-Institute of Dzidzernagapert (Yerevan), hosted Dr. Narine Margarian for a lecture on the fate of Armenian Genocide orphans and the extensive efforts to save and reintegrate them into the Armenian nation.

In her hour-long lecture, Dr. Margarian emphasized that alongside Alexandropol/Leninagan (now Gyumri) often referred to as the “City of Orphans”, Lebanon became a major refuge for thousands of Armenian orphans. These children were sheltered in various orphanages, supported by Western humanitarian organizations such as the Near East Relief, as well as AGBU and other Armenian charitable institutions.

Dr. Margarian elaborated on the Ottoman authorities’ policies regarding Armenian orphans, detailing the mechanisms they employed and the objectives they sought to achieve. She explained the profound psychological shifts these children experienced between 1915 and 1920, as they were forcibly separated from their families and subjected to Turkification policies under the Committee of Union and Progress (CUP). In Turkish orphanages, they underwent systematic assimilation, including name and religion changes and the suppression of the Armenian language, their mother



tongue.

However, following the Allied victory in World War I, many of these orphans were rescued and relocated to Armenian orphanages, marking a critical stage in their identity restoration. Dr. Margarian highlighted the relentless efforts of Armenian organizations, compatriotic unions, and individuals, often with the support of the Allied authorities, to save Armenian children who had been kidnapped, placed in Turkish households, or left in the care of Arab tribes by desperate parents hoping for their survival.

Despite these efforts, Dr. Margarian noted with sorrow that many Armenian orphans never returned to their nation, becoming permanently estranged from their heritage.

Suraiya Faroqhi, Professor, Ibn Haldun University, Turkey

Dr. Hasmik Khalapyan is an Associate Professor at the American University of Armenia (AUA), specializing in Ottoman history, the history of

social and labor movements, and women’s history. Her scholarly work has been published in esteemed international journals and edited volumes, with translations in both Western Armenian and Turkish.

# Դամբան

«Մարդն ընդունակ է լաւագոյնին եւ վատագոյնին, բայց վատագոյնի դէպքում է» Յրանսիական

## ՈՒՐԵՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Մարդկութիւնը իր զարգացման հազարամեակների անցած ճանապարհին անդադար փոփոխութիւնների է ենթարկուել միշտ բարեխառնելու եւ առաջադիմելու սկզբունքով՝ մտաւոր, հոգեբանական, կենցաղային, բարոյական, կրօնական, փոխադարձ յարաբերութեան եւ կեանքի տարբեր բնագաւառներում, ուր տեղի են ունեցել յայտնագործութիւններ ու նորարարութիւններ: Այսօրուայ մանկահասակները չեն կարող պատկերացնել, որ իրենց ձեռքի խաղալիք դարձած բջջային հեռախօսը (smart phone) ընդամէնը երեք տասնամեակի առջև գոյութիւն ունէր, իսկ արդի գործնապաշտ (pragmatique) միջոցառումները թերեւս բոլորի ճաշակով չէ: Հոգեկան ու բարոյական առումով բազում են ժողովուրդներ եւ կրօններ, որոնք կեանքի ու մահի իրարից յաւերժ անբաժանելի փաստը երկնային իրակախութեան շարունակութիւնն են համարում: Շատերն են փորձել ու ցանկացել բացառապէս ու լուսաբանել, հետագայ կեանքի առեղծոածային գաղտնիքը, բայց հրաժարուել են՝ խնդիրը մինչ օրս մնացել է թերուս կղերականների հայեցողութեան, առանց մի քայլ առաջանալու, իսկ գիտնականները՝ լուռ են:

Այդ խնդիրը, բնութեան պարտադրած անհերքելի պայման է եւ քննարկման ենթակայ չէ: Եթէ կեանքի ծագման մասին չունենք ստույգ տեղեկութիւն ու բացառապէս, ապա մահի պարագային պատճառներն յայտնի են եւ պարզ՝ ծերութիւն, հիւանդութիւն, տարբեր տեսակի սպանութիւններ, ոճիր, մաշում, արկած եւ այլ բնական ու անբնական պատրուակներ:

Հեթանոսական ժամանակներից ի վեր մարդկութիւնը ծիսակատարութեան աւանդույթներ է ստեղծել ցեղերի ու երկրների պայմաններին համապատասխան եւ եթէ նորածինների առիթով խրախճանք ու խնջոյք է լինում, ապա մահի պարագային՝ յուղարկատրութեան ծէսերը այլ բովանդակութիւն ու ծաւալ էին ունենում ըստ երկրի աւանդութեան եւ հանգուցեալի ունեցած անհատական կարողութեան եւ հասարակութեան կամ ընտանեկան միջավայրում զբաղեցրած դիրքին:

Կեանքի յետմահու շարունակականութեանը, հնագոյն ժամանակներից, մինչ արդի պայմաններում, դեռ կան հաւատացողներ: Մի՞թէ այդ չէ շքեղ թաղումների, կոթողների ու տապանների կառուցման պատճառը, թէ՛ գերեզմանոցների, թէ՛ հասարակական վայրերում, որ եգիպտական քարէ դամբարանների (sarcophage) եւ այլ կառուցների տրամաբանական շարունակութիւնն են: Բարոյական առումով, հանգուցեալի յիշատակը չաւերժացնելն է նրանց հիմնական ու միակ նպատակը:

Բազմաթիւ են այդպիսի կառուցները աշխարհում ցրուած, որոնցից կարելի է յիշել Աբու Սիմբելը, որ կերտուել է Եգիպտոսում, Նեղոսի ափին՝ նուիրուած Ռամսես 2-ին եւ կնոջը՝ Նեֆերտիտիին: Այդ տարածքում է կառուցուել նաեւ աշխարհի հրա-

շալիքներից՝ Քեոփի բուրգամբարանը: Նոյնքան յիշուելու արժանի է հրաշակերտ Թաջ Մահալ դամբարանը Ագրա քաղաքում, որ կերտել է 1632ին Հնդկաստանի Շահ Զահան կայսրը իր սիրելի կնոջ՝ Մումթազ Մահալի 14րդ ծննդաբերութեան ընթացքին վախճանման առիթով:

Մեծ քանակութեամբ դամբարաններ տարածուած են տարբեր երկրներում, ինչպէս կենտրոնական Ամերիկան, Հնդկաստանը, Մերձավոր Արեւելքը եւ այլն, որոնցից կարելի է նշել Փարիզի Պանթէոնը, ուր իրենց վերջնական հանգիստն են վայելում բազմաթիւ մտաւորականներ ու քաղաքական գործիչներ, ինչպէս նաեւ մեր ազգակիցներ Միսաք եւ Մելինէ Մանուշեանները, իսկ Լենինի դամբարանը կառուցուել է Մոսկուայում հարիւր տարի առաջ, ուր պահուած է նրա զմուռած դին: Այս կառուցներից ոմանք արթնաւոր են:

Վերոնշեալից պարզ է, որ դամբարանները կերտուել են կայսրների ու անուանի անձանց համար, ուր հասարակ մահկանացուների համար տեղ չկար, անհասանելի էր: Նրանց համար նախատեսուած է թաղում հողի մէջ փորուած խոռոչում, կամ հրկիզում, որ համատարած կարգ են ողջ աշխարհի համար, միայն թէ ամէն երկիր ունի իր ուրոյն աւանդույթն ու ծիսական ոճը:

Դիակը հրկիզելու դէպքում աճիւնը պահուած է սպիտի մէջ կամ ցրում ազատ տարածքում ու գետի մէջ, մինչ հանգուցեալի թաղման կարգը կատարուած է գերեզմանոցում, որ յատուկ փակ տարածք է սոսկ այդ նպատակին տրամադրուած:

Որեւէ անպատեհութիւն չի եղել հազարամեակների ընթացքին, մինչեւ որ, արեւմտեան խոշոր քաղաքները, ուր գետինը թանկարժէք է, յազցան գերեզմանչութեամբ, իսկ առանց որեւէ օգտակարութեան գերեզմանոցների զբաղեցրած հսկայական տարածքները խանգարում էին շինարարական ծրագրերի իրականացմանը: Քաղաքի պատկան մարմինների մօտ միտք ծագեց եւ որոշեցին փուլային հերթական կարգով մի փոսի մէջ թաղել միեւնոյն ընտանիքի պատկանող մի քանի դիակ: Գաղափարը ընդունուեց եւ բարձր գնահատուեց հասարակութեան կողմից առանց հակադրութեան:

Մեր երկրում նման լուծումի անհրաժեշտութիւն ունենք ի նկատի ունենալով Երեւանի գերեզմանոցների ոչ միայն ողբալի ու անիշխանական (anarchique) վիճակը, ուր տապաններին մօտենալը խիստ վտանգաւոր ու դժուար պայմանների հետ է կապուած, նաեւ շիրիմների վրայ քայլելով, քանզի ոչ մէկ արահետ կամ շաւիղ չկայ նաեւ տապանների որեւէ տողագրութիւն (alignement):

Մինչդեռ խելամիտ ու բարի կամք դրսեւորելու պարագային քաղաքապետարանի կողմից Աւագեան ախոռի նմանուող արդի երեւանեան գերեզմանոցները, ուր քայլելը նոյնիսկ դժուարութիւնների հետ է կապուած, պէտք է վերածել ծաղկազարդ կանաչապատ տարածքի, որ տարրական յարգանքի տուրք մատուցելու քայլ կը լինի յաւերժ ննջեցեալների յիշատակին:

Բազում գլոբալիտորուկ հարցերով ծանրաբեռնուած քաղաքապետարանի աւագանու առջեւ այս խնդիրը եւս արժանի է քննարկութեան:

# Սիրոյ Պատուիրանը (Ս. Վալենթինի Օրուան Առթիւ)

ՎԵՐ. ԴՈՎՏ. ՎԱՐԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Օրացոյցի վրայ Փետրուար 14-ը Ս. Վալենթինի Օր է, այսպէս կոչուած «Սիրականներու Օր», երբ մարդիկ իրենց սէրը կ'արտայայտեն իրենց սիրականներուն, կամ սիրած անհատներուն՝ քարտերով, ծաղիկներով, շաքարեղեններով եւ այլ խորհրդանշական նուէրներով:

Սիրելը, անշուշտ, միայն սիրականներու մենաշնորհը չէ: Ամէն մարդ կոչուած է սիրելու: Մէրը աստուածատուր շնորհ մըն է մարդ արարածին: Մէրը ամենէն տիրական յատկանիշն է Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդ հակին: Անոր հօր ազդեցութեամբ է, որ մարդկային կեանքը կը դառնայ աստուածահաճոյ, օգտաշատ եւ երջանիկ իրականութիւն մը: Աստուածաշունչ Մատենաբեր կը հաղորդէ մեզի, թէ Աստուծոյ կամքն ու բաղձանքն է որ իր արարածները սիրեն զի՛նք եւ սիրեն զիրա՛ր:

Առիթով մը օրէնքի ուսուցիչ օրինական մը, Յիսուսի քով եկաւ զինք փորձելու համար եւ իրեն հետեւեալ հարցումը հարցուց: «Վարդապետ, ի՞նչ պէտք է ընեմ յաւիտեանական կեանքը ժառանգելու համար»: Յիսուս ըսաւ, «Օրէնքի Գիրքին մէջ գրուածը ի՞նչ է. ինչպէ՞ս կը հասկնաս»: Ան պատասխանեց «Սիրէ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ մտքովդ» եւ «սիրէ ընկերդ քու անձիդ պէս»: Յիսուս ըսաւ. «Ճիշդ պատասխան տուի: Կարեւոր է որ պիտի ապրիս»:

Կրակատար կեանք ունենալու համար, Աստուծոյ կամքին համեմատ ապրելու եւ Երկինքի թագաւորութիւնը ժառանգելու համար երկու գլխաւոր պատուիրաններ կան, սէր առ Աստուած եւ սէր առ մարդ:

Առաջին պատուիրանն է «Սէր առ Աստուած»: Սէրը աշխարհի հօրագոյն ուժն է: Աստուծոյ նկարագրին ամենէն յատկանշական ստորագրելին իր սէրն է: Ի գուր չէ որ Առաքեալը ըսաւ, «Աստուած սէր է» (Ա. Յովհ. 4.8): Եւ քանի որ Աստուած իր պատկերով ստեղծեց մարդ արարածը, անոր ալ նկարագրի ամենէն ցայտուն յատկանիշը սէրն է:

Մարդկային սէրը իր տարբեր արտայայտութիւնները ունի. կան բնազդական, մարմնական, մտաւորական, յարաբերական, եւ աստուծային սէրեր: Այս բոլորը մարդկային կեանքի մէջ իրենց դերը ունին: Այս բազմապիսի սէրերուն մեծագոյնը աստուածային սէրն է,

որ յունարէն բնագրին մէջ կը կոչուի ալաբէ: «Ալաբէ»ն անշահախնդիր, անձնուրաց, յաւերժական, անփոփոխելի սէրն է: Այս սիրով է, որ Աստուած կը սիրէ մեզ:

Աստուածային այս սէրը Աստուծոյ Հոգիէն կը բխի եւ մարդոց սրտին մէջ կը հոսի: Մարդ արարածն ալ, իր Արարիչին նմանութեամբ՝ կոչուած է այդ յատկանշական բնութիւնը ցոյցացնել իր կեանքին մէջէն, իր խօսքով ու գործով, իր վարքով ու բարքով, իր նկարագրով ու կենցաղով:

Երբ Յիսուս օրինականին ըսաւ, «Ասիկա ըրէ ու պիտի ապրիս» ըսելու պէտք, թէ զԱստուած սիրել կը նշանակէ Անոր կամքին եւ հեղինակութեան յանձնուել, Անոր հանդէպ կատարեալ վստահութիւն եւ նուիրում ունենալ: ԶԱստուած սիրել կը նշանակէ Անոր հնազանդել, Անոր սիրոյն լեցունութիւնը զգալ, եւ սէրը արտայայտել մեր բոլոր յարաբերութեանց մէջ:

Երկրորդ պատուիրանն է «Սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս»: Անոնք որոնք զԱստուած կը սիրեն իրենց ամբողջ հոգեբանքով՝ Աստուծոյ հետ հաղորդակից կ'ըլլան եւ այդ սէրը կը փոխանցեն իրենց նմաններուն: Կը սիրեն իրենց նմանները, չեն կրնար անտարբեր մնալ անոնց ցաւերուն եւ տագնապներուն: Կը համակրին, կը գթան, կ'օգնեն, կը ծառայեն: Անոնք ուրիշներու ծառայութեան մէջ կը գտնեն իրենց երջանկութիւնը:

Օրինականը որ եկած էր հարցուփորձելու Յիսուսը, հարցուց, «Ո՞վ է իմ ընկերս»: Յիսուս այդ հարցումին պատասխանեց առակով մը, որ կոչուած է «Բար Սամարացիին Առակը» (Լուկ. 10. 30-37): Օրինականը հաւանաբար շատ գարմացաւ, որովհետեւ հրեայի մը համար ուրիշ հրեայ մը միայն կրնար ընկեր ըլլալ: Այս առակին մէջ Յիսուս դիտել կուտար, որ նոյնիսկ թշնամի նկատուող Սամարացի մը կրնար ընկեր ըլլալ հրեային: Ճշմարտութիւնը այն է, որ մարդիկ Աստուծոյ ընկեր են, եղբայր են իրարու եւ սիրելու են զիրար, իրարու հանդէպ ունենալու են բարեացակամութիւն եւ պատասխանատուութեան զգացում:

Յիսուսի պատգամը օրինականին հետեւեալն է. «Սիրէ, որ ապրիս յաւիտեանական կեանքը: Սիրէ՛ ոչ միայն քեզ սիրողները, այլ քեզ չսիրողներն ալ: Սիրէ՛ զանոնք քու անձիդ պէս»:

Յիսուսի սուած պատուիրանը այն է, որ մարդիկ իրենց նմանները

Շար.ը էջ 19

**Forward Law Group**

EXPERIENCED PERSONAL INJURY ATTORNEYS SERVING LOS ANGELES

WWW.FORWARDLG.COM

(818) 471-8389

# Լենինգրադցիների ճաշարանը եւ Մայրիկս (Պատմուածք՝ իրական փաստերով)

## ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... 1945 թ. Մայիսի իննը նշանաւորուեց որպէս Գերման-իայի դէմ խորհրդային երկրի կողմից իրականացուած յաղթանակի օր:

Պատերազմի դաշտից վերադարձան մեր թաղի ողջ մնացած փոքրածիւր զինուորներ, ոմանք՝ հաշմանդամ դարձած:

Դեռ հայրկիցս լուր չկար: Հազիւ ութ տարեկան, ես զգում էի մօրս անհանգիստ վիճակը, տեսնում էի խուսափոխական հայեացքն ու միայնութեան մէջ մնալու ձգտումը: Յաճախ էլ նրան «բռնացնում» էի Յիսուսի պատկերի առջեւ աղօթելիս: Դիւրին է ասելը, նա գրեթէ չորս տարի ոչ մի լուր չունէր ամուսնուց:

Առերեւոյթ կեանքը մտաւ բնական հունի մէջ, բայց առաջ-ուստ նման, երկրում տիրում էր սովն ու աղքատութիւնը: Բնականաբար երկիրը պէտք ունէր նոր շնչառութեան: Երկրի նիւթական եւ տնտեսական անձուկ վիճակը հազարաւոր գոհերի պատճառ դարձաւ ողջ խորհրդային երկրում, եւ այն էլ՝ այսպէս կոչուած խաղաղ պայմաններում:

Գերտերութիւնները, որ մինչ այդ, պատերազմի ընթացքին տնտեսապէս օգնութիւն էին ցոյց տալիս խորհրդային երկրին, այժմ արդէն «ձեռք էին քաշել» իրենց համար զգուշիկ կոմունիստական վարչակարգին օգնելուց: Նրանց նպատակն էր վերջնականապէս տնտեսական քայքայումի ենթարկել Կոմունիստական վարչակարգը: Ամէհի սովն ու համաճարակը սկսուեց պատերազմից յետոյ: Մարդիկ ամէն մի միջոցի դիմում էին օրուայ նուազագոյն ուտելիքը հայթայթելու համար: Ալան-թալանը սովորական երեւոյթի վերածուեց: Հոկտեմբեր ամսուայ վերջին օրերն էին: Տարահանուած (Evacuation) լենինգրադցիների համար ստեղծուած կառավարական ճաշարանում էր աշխատում մայրիկս: Որը փակուելու վրայ էր, սակայն մենք եւ մեր հարեւանները դեռ գաղտնիքն օգտուում էինք այդ ճաշարանից:

Ամէնուր սով էր: Այստեղից-այնտեղից կարելի էր լսել իրական, անհաւատալի դէպքեր:

- Էն մեր դիմացի փողոցում ապրող Արմոն Զանգուի ձորում ինչ որ թունաւոր կանաչի է կերել, - ասում էր ճղճղան ձայնով յայտնի Շողիկը,- որի պատճառով ամբողջ մարմինը վէրքերով է պատել:

- Յետոյ՞ յետոյ՞ ի՞նչ է եղել,- իրար հերթ չտալով վրայ տուին հաւաքուած կանայք:

- Ի՞նչ պիտի լինէր, բժիշկները չեն կարողացել նրան փրկել:

Ո՞ւմ, որի՞ն հասնէր խեղճ մայրիկս: Նախկինում Արաբկիրի Ֆրանսապետների բարակներում ապրող շատ ընտանիքներ էին եկել մեր թաղը ու կառավարական վարկի օգնութեամբ սեփական տներ կառուցել: Բոլորն էլ ակնկալիք ունէին աւագ խո-

հարար ֆրանսահայ իմ մայրիկից:

Տարահանուած լենինգրադցիների թիւը գնալով նուազում էր, ըստ այնմ էլ պակասում էր ճաշարանին յատկացուող սննդամթերքի քանակը: Որքան սրւում էր իրավիճակը՝ նոյնքան ողբերգական էր դառնում ճաշարանին յատկացուող սննդամթերքի քանակը:

Այս ամէնի հետ մէկտեղ աւելանում էին ճաշարանի աշխատանքին հետեւող աչքերը: Բոլորն էլ անօթի էին, նոյնիսկ ոստիկանապետն ու Շրջաովետի նախագահը, որոնք մշտապէս ճաշում էին խոհանոցին կից մի փոքրիկ սենեակում:

Չափազանց դժուարացել էր ճաշարանից կերակուր «գողանալը»: Մեր դրացիները անյոյս վիճակում էին: Բարսեղն իր երեք զաւակներով, Զանգուգետի ձորում, վայրի, անվնաս կանաչիներ էին հաւաքում եւ, հենց տեղում, հում վիճակում, առանց լուանալու ճաշակելու համար:

- Բարսեղը քաղցածութիւնից էնքան խոտ ա կերել, որ ուռել ա, եւ հենա, հենա մահանալու է,- այս չարաբաստիկ լուրը տարածուեց թաղով մէկ:

Վրա հասած շտապօգնութեան բժիշկը առաջին օգնութիւնը ցոյց տալուց յետոյ եղրակացրել էր.

- Առաջիկա մէկ-երկու ժամուայ ընթացքում եթէ հիւանդը ապուրներ չ'օգտագործի, հազիւ թէ հնարաւոր լինի նրան փրկել:

Բարսեղի աւագ որդին, եղբորս՝ Արսենի մտերիմ ընկեր Յովնանը անմիջապէս վազել է ճաշարան՝ մայրիկիս մօտ ու նրան յայտնել բժշկի տուած ցուցմունքը:

- Լաւ, տղաս, ես հիմա մի բան կը կարկաղդեմ: Դու սպասիր դրսում, երբ կերակուրը պատրաստ լինի՝ ես քեզ լուր կը տամ:

Առանց աջ ու ձախ նայելու, առանց ուշադրութիւն դարձնելու այն հանգամանքին, որ կարող են իրեն հետեւել, ձեռքի տակ եղած սննդամթերքով մի հիանալի ապուր է պատրաստում եւ տալիս դրսում, պատի տակ կուչ եկած Յովնանին: Վերջինս էլ հիանալի, բուրումնաւէտ ապուրը հասցնում է հօրը:

Այս գործողութիւնը երեք օր է տեւում, ու բնականաբար, լուրը դառնում է հասանելի ոչ միայն թաղի բնակիչներին, այլև պատկան մարմիններին:

- Սա խայտառակութիւն է,- կուսակցական ժողովում ամպագոռգոռ ձայնով կարծես երկինքն է պայթեցնում Շրջաովետի կուսակցութեան քարտուղարը,- ի՞նչպէս կարելի է ինչ որ մի հիւանդի համար մի քանի օր կերակուր պատրաստել լենինգրադցիների սննդամթերքից: Ո՞վ է այդ կնոջը իրաւունք տուել նման բան անել:

- Լա՛ւ, բա՛ւ, ձե՛նդ մի բարձրացրու ընկեր խուրջուդեան,- միջամտում է Շրջաովետի նախագահ Շահսուվարեանը,-

ես հիմնականում գիտեմ թէ ինչ է եղել, այնուհանդերձ եկէք լսենք իրեն՝ վերժինէին: Այստեղ հաւաքուած է Արաբկիրի շրջանի կուսակցական ակտիւր եւ թող նա էլ որոշի, թէ ինչպէս վարուել այդ կնոջ հետ:

- Ընկեր Ումրիկեան (սա էլ KGB-ի գործակալներից է), - ապա մի ներս կանչէք այդ կնոջը,- կարգադրում է նախագահը:

Խեղճ մայրիկս մի բուռ դառած, մի տեսակ սմբած, մանր քայլերով մտնում է սրահից ներս: Բնաւ չես ասի, որ նա այն կենսախիւնը 35-ամեայ աւելի քան համակրելի երիտասարդ կինն է:

- Վերգինէ (յաճախ էին այդպէս դիմում մայրիկիս), - ասա, խօսի՛ր, թէ ինչպիսի՞ն է իրական պատմութիւնը, ամբողջ Արաբկիրը քո մասին է խօսում, շատերն էլ քեզ Պահապահ Հրեշտակի տեղ են դրել:

- Ի՞նչ ասեմ, ի՞նչ պատմեմ պարոն... օ՛հ, կը ներէք, ընկեր Շահսու... Շահսու...,- (վարեան,- կողքից յուշում է ամբողջ կուրծքը շքանշաններով «գարդարուած», զինուորական հագուկապով զնդապետը) վարեան, մեր դրացին՝ Բարսեղը շատ քանակի խոտ է կերել, կարծեմ սինձ են ասում, եւ ամբողջ մարմինը ուռել է, կարելի է ասել՝ մի տեսակ թունաւորում:

- Լա՛ւ, յետոյ, յետոյ՞ ի՞նչ է եղել,- մէջ է ընկնում զինուորականը:

- Յետոյ այն, որ բժիշկն ասել էր, որ նա կարող է փրկուել, եթէ մի քանի օր ապուր, ինչպէս դուք էք ասում՝ սուպ ուտի եւ ջուր բնաւ չ'օգտագործի: Դէ՛, ես էլ մեր ճաշարանում տարբեր սուպեր պատրաստեցի եւ մարդը մի քանի օր դրանք ուտելուց յետոյ ոտքի ելաւ:

- Իսկ քեզ ո՞վ է իրաւունք տուել պետական միջոցները օգտագործել անհատական նպատակների համար,- սա էլ խուրջուդեանն էր,- մեր ուսուցիչները եւ քոյրերի հասանելիք սննդի բաժնից կտրել ու յատկացնել ինչ որ անյայտ մարդկանց:

- Ներողութիւն պարոն... - Ես պարոն չեմ, չափոք ճանաչիր ընկերուհի... «Պարոնը» այնտեղ էր, քո կապիտալիստական երկրում:

- Ես ալ «ընկերուհի» չեմ պարոն, ես տիկին եմ... արեւմտահայերէնի անցնելով շարունակում է մայրս,- հիմա բացատրեմ: Այն մարդը, որուն համար տեսակ մը բժիշկ դարձայ, մեր դրացին է: Բարսեղ է անունը: Շատ բարի եւ պատուախնդիր մարդ մըն է: Ան ալ, մեզի պէս, ընտանիքով, 36-ին Ֆրանսային ներգաղթած է Հայրենիք:

- Դէ ասա պոլսեցի էք էլի,- սա էլ մէկ ուրիշն է:

- Լա՛ւ, թող ատանկ ըլլայ, մենք հայ չե՞նք,- ներքին գայրոյթն ու վրդովմունքը չզսպելով շարունակում է մայրս,- քանի մը օր հիւանդի մը համար ապուր պատրաստելով յանցա՞նք գործած կըլլամ:

- Բայց ո՞ւմ կերակուրից էք բաժին հանել ուրիշին կերակրելու համար, ի՞նչ իրաւունքով, ո՞ւմ հաշուին,- ասում է զինուորականը:

- Որո՞ւ հաշուին՝ Ռուսներու... -

Մի պահ լուռութիւն: Շրջաովետի նախագահ Շահսուվարեանը, որ բազմաթիւ անգամ իր հիւրերի հետ մայրիկիս ճաշարանի աչքից հեռու ետեւի սենեակում խնջոյքներ էր սարքել ճաշարանի սննդամթերքով, փորձեց խաղաղութեամբ աւարտել «դատական ակտը».

- Լա՛ւ, ընկերներ, կարծում եմ ամէն ինչ պարզ է: Եթէ ուրիշ արտայայտուողներ չկան, եկէք նկատողութիւն ձեւակերպենք ընկեր վերժին Անասեանին՝ վերջին նախագրուշացումով, պետական ունեցուցքը ապօրինաբար չչուայլելու խօստումով:

- Ի՞նչ նկատողութիւն... դատի՞, դատի պիտի տալ այս կնոջը,- Քէյջլիբին էր արտայայտուողը:

- Ի՞նչ... դա՞տ... այդ Ձեզ դատի պիտի տալ, Ձեզ, որ օրեր, ամիսներ շարունակ կերակուր էք այս ճաշարանում, էն ետեւի սենեակում,- չզսպելով գայրոյթը՝ անցնելով մաքուր տեղական հայերէնի, գրեթէ ճշարտով ասում է մայրս ու շարունակում,- ի՞նչ էք կարծում, ո՞ւմ հաշուին եմ Ձեզ կերակրել՝ Լենինգրադցիների համար տրամադրուած սննդամթերքից:

Մայրիկիս ելոյթը լուռութեան էր մատնել սրահին՝ ուր հաւաքուած էր Արաբկիրի ողջ իշխանական ընտրանին:

Ոչ ոք չէր խօսում, նոյնիսկ Շրջաովետի նախագահ Շահսուվարեանը: Ի վերջոյ, նա էր, որ փորձեց փակել կուսակցական ժողովը՝ հնարաւորինս արագ վերջ տալու համար այդ տհաճ իրավիճակին:

- Ամէն ինչ պարզ է յարգելի կուսակցական ընկերներ: Կարծում եմ ծանր յանցանք չի գործել վերժինէն, ի վերջոյ, նրա շնորհիւ մի մարդ է փրկուել: Եկէք ներենք նրան ու մի պարզ նկատողութիւն տալով աւարտենք այսօրուայ ժողովը: Մի մոռանաք, որ մեր կուսակցութիւնը մեզ սովորեցնում է բարի լինել մարդկանց նկատմամբ եւ հնարաւորինս մեղմ վարուել նրանց փոքր-մոքր յանցանքների համար:

Բոլոր ժողովականները լռելեայն ընդունեցին նախագահի առաջարկը: Չէ՞ որ նրանցից իւրաքանչիւրը օգտուել էր բարեհամբոյր երիտասարդ խոհարարուհի տիկին Վերժինէի առատաձեռն հիւրասիրութիւնից:

Այդ պատմական ժողովից յետոյ, երկար չգոյատեւեց Արաբկիրի տարահանուած Լենինգրադցիների համար նախատեսուած ճաշարանը: Նրանք կամաց-կամաց վերադառնում էին իրենց հայրենի քաղաքը:

Շուտով փակուեց հին արաբկիրցիներին ծանօթ այդ ճաշարանը, որը հաւաքու պատերազմի ժամանակ, գրեթէ չորս տարի մի տեսակ Աստուածահաճոյ պարգեւ եղաւ ոչ միայն մեր ընտանիքի, այլև մեծաթիւ հարեւանների, Արաբկիրի շրջանի ողջ աւագանու, եւ, ի հարկէ մեր հերոս, անէկղոտների մեծ վարպետ, միամիտ, բարի ու ազնիւ Բարսեղի համար:

# Հայուն Աւանդութիւնը

ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Աւանդութիւնը սերունդներու ու անոնց միջոցով փոխանցուած ժառանգութիւնն է, որ կ'ընդգրկէ անձին, ընտանիքին, հաւաքակա- նութեան եւ ազգին իւրաքանչիւր միտքը, կեցուածքը, վարուելա- կերպն ու, տակաւին, ընկերային եւ կրօնական սովորութիւնները: Աւան- դութիւնը այս իմաստով կը դառնայ ապրող կեանք՝ ներառելով մարդուն, հաւաքակաւութեան եւ ազգին ամբողջական մշակոյթի գի- տակցութիւնը:

«Աւանդութիւն» բառին լատիններէն արմատը՝ tradere, կը նշա- նակէ բաժնեկցիլ, պահել եւ փո- խանցել վերեւ յիշուած ժառան- գութիւնը՝ ապահովելու համար հա- լաքակաւութեան ինքնութիւնը եւ պատմութիւնը: Այս իմաստով, աւանդութիւնը կը դառնայ կեանք, որուն պէտք է գործարարել եւ պահել, բայց նոյնքան նաեւ՝ վերա- կենսաւորել: Արամ Ա. վեհափառ հայրապետը մեզ բոլորս կը հրաւի- րէ մեր աւանդութիւններու վերա- կենսաւորման՝ 2025-ը հռչակելով «Աւանդութիւններու վերակենսա- ւորման տարի»:

Կան աւանդութիւնը պահելու եւ վերակենսաւորելու հայկական հիմքեր, ենթահողերը, անոնց պար- տադրանքները եւ այս բոլորին մէջէն գալն վերակենսաւորելու կա- րեւորութիւնը: Իբրեւ հայեր, եթէ սփիւռքը մեծ համեմատութեամբ դասականն էր, բայց վերջին երե- սուն տարիներուն անոր վրայ եկաւ աւելնալու հայաստանեանը: Հա- յուն աւանդութիւնը եւ անոր վե- րակենսաւորումը վերածուեցաւ «երկսայրի սուր»-ի մը, իսկ հայը՝ իր դասական եւ հայաստանեան շերտերով, սփիւռքեան իրականու- թեան մէջ պարտի անոր երկու կողմերը պահել սուր:

Տուպայ, Արաբական Միաց- եալ Էմիրութիւններ, յունուար 2025: Տուպայը օժտուած է օփերա- յի համար սարքուած շատ գեղեցիկ համերգասրահով մը՝ կառուցուած արդիական ոճով, ինչպէս՝ Տուպա- յի իւրաքանչիւր ենթակառուց: Ներ- կայ պիտի գտնուի Հայաստանի սիմֆոնիկ նուագախումբի ելոյ- թին՝ ղեկավարութեամբ մայիսի Սերգէյ Սմբատեանի, որուն երաժշ- տական եւ խմբավարի տաղանդին ու կարողութեան ծանօթ եմ:

Տուպայի օփերայի համեր- գասրահը իւրաքանչիւր ելոյթէ առաջ ունի հանդիսատեսներուն համար սարքուած հիւրասիրու- թեան բաժին մը: Փոքր սեղանի մը ետին կանգնած՝ կը վայելի այդ պահը, երբ երիտասարդ զոյգ մը մօտեցաւ ինծի եւ անգլերէն լե- գուով խնդրեց, թէ կրնա՞ք բաժ- նեկցիլ սեղանը ինծի հետ: Սիրով ընդառաջեցի իրենց խնդրանքին, բայց շարունակեցի վայելել իմ հիւրասիրութիւնս՝ առանց խան- գարելու գիրենք: Երիտասարդ զոյ- գը շատ մեղմ ձայնով սկսաւ զրու- ցել արեւելահայերէնով: Չուշացաւ հարցումս. «Հա՞յ էք»:

Երիտասարդ զոյգը շատ ու- րախացաւ: «Մենք կուսեցինք, որ հայ կրնաս ըլլալ եւ անոր համար համարձակեցանք քեզի մօտենա- լու», ըսին ինծի:

Երկու հայորդիները մասնա- գիտութեամբ բժիշկներ են՝ վկայ- ուած Երեւանի բժշկական համալ- սարանէն եւ Տուպայ հաստատուած են աշխատանքի բերումով: «Շատ

գեղեցիկ քաղաք է, կը սիրենք հոս ապրիլ», ըսին ինծի:

«Դուք՝ դասական սփիւռքի հայերը, շատ աւելիով կապուած էք հայրենիքին եւ գիտէք՝ ինչպէ՞ս պահել հայուն արժէքները եւ ինք- նութեան գիտակցութիւնը», ըսաւ երիտասարդ կինը: «Մենք՝ հայաս- տանցիներս, երբ դուրս գանք Հա- յաստանէն եւ հաստատուինք սփիւռք, շատ աւելի արագ կը լուծուինք տեղական պայմաննե- րուն հետ»:

Չգարմացայ երիտասարդ բժշկուհիին նկատողութեան: Բազ- մաթիւ այցելութիւններուս եւ հան- դիպումներուս ընթացքին՝ սփիւռ- քի տարբեր երկիրներու մէջ, նշա- րած եմ այս մէկը: Նոյնքան նաեւ տեսած եմ, թէ հայաստանեան եւ դասական սփիւռքի միջեւ հարո- դակցութեան եւ համակեցութեան կապերը որքան թույլ են, եւ երբեմն նոյնիսկ չկան: Եթէ դասական սփիւռքը կը մաշի, բայց անոր վրայ կու գայ աւելնալու հայաս- տանեանը, որ կը լուծուի:

Այս վիճակներուն մէջ հայուն համար եղած է, կայ ու պիտի շարունակէ մնալ հիմնական մեծ ազգային առաքելութիւն մը՝ պա- հել ազգային ինքնութիւնը, լե- գուն, մշակոյթն ու աւանդութիւնը, որ՝ «Վճռական դեր ունի անոր ինքնութեան երաշխաւորման, ամ- բողջականութեան պաշտպանման, գոյութեան ամրացման ու շարու- նակականութեան պահպանման մէջ» (Արամ Ա. վեհափառ հայրապետ, 2025):

Հայկական սփիւռքը, գէթ՝ դա- սականը, մեծ համեմատութեամբ հետեւանք է Յեղասպանութեան: Սփիւռքի տարածքին շինեցինք «պզտիկ Հայաստաններ», որովհե- տեւ ուզեցինք ապրիլ մեր ինքնու- թեամբ եւ աւանդութիւններով՝ առանց անտեսելու տեղականն ու տեղացին:

Հաւաքակաւութիւններ կ'ապ- րին իրենց աւանդութիւններով եւ անոր բաղադրիչ՝ մշակութային եւ ինքնութեան արժէքներով: Այս կը դառնայ իւրաքանչիւր իւրաքան- չիւրին համար: Վեհափառ հայրա- պետը կը հիմնադրէ իր թեզը, երբ կը շեշտէ, որ աւանդութիւնը՝ «ժո- դովուրդին գոյութիւնը կ'ամրապն- դէ», եւ գոյութիւնը պահելով՝ «Ար- ժէքները, տեսլականները, հաւատ- քը ու ոգին կը պահէ»:

Աւանդութիւնները, զանոնք պահելն ու փոխանցելը պէտք է շեշտել միայն ներազգային տեսան- կիւնէն, բայց նոյնքան նաեւ՝ հա- մամարդկային եւ համազգային տե- սանկիւնէն: Համաշխարհային քա- ղաքակրթութիւնն ալ կը հարստա- նայ այս բազմամշակութային ար- ժէքներով եւ իւրաքանչիւր ազգա- յին աւանդութիւններով: Հայը, որ կը տքնի պահելու ու փոխանցելու իր աւանդութիւնները սերունդէ սերունդ, իր նպատակը կը բերէ համամարդկային քաղաքակրթու- թեան զարգացման՝ բաժնեկցելով իր աւանդութիւնները:

Ներկայ օրերու աշխարհի յա- ռաջիսաղացքին մէջ մարդիկ կրնան աւանդութիւնները ժամանակավ- րէպ նկատել: Վեհափառ հայրապե- տը կը շեշտէ, որ սխալ է այս ըմբռնումը, թէ՛ «Աւանդութիւնը անցեալ է, հնամաշ, անհրապոյր, անիմաստ եւ ներկայ ժամանակնե- րու անյարիր»: Այս մտածողու-

# Պոլսոյ Մխիթարեան Վարժարանի 200-Ամեակի Հանդիսութեանց Մեկնարկը



Պոլսոյ Մխիթարեան Վարժա- րանի հիմնադրութեան 200-ամեա- կի յօբելինական միջոցառումնե- րու սկիզբը բնորոշուեցաւ անցեալ շաբաթ օր գոհաբանութեան պա- տարագով մը, գոր մատուց թուրք- իոյ Հայ Կաթողիկէ Պատրիարքու- թեան կառավարիչ Տ. Վարդան Մ. Վարդապետ Գագանճեան: Ս. Պա- տարագին ներկայ գտնուեցան Տ. Արամ Արք. Աթէշեան եւ այլ բարձ- րաստիճան հիւրեր եւ ներկայացու- ցիչներ: Պատարագիչ Գագանճեան Գերապայծառը խօսեցաւ օրուան պատշաճ քարոզ մը: Անդրադար- ձաւ վարժարանի հարուստ անցեա- լին, մաղթելով որ յարատեւ ըլլայ այս կրթօճախի գնացքը:

Կրօնական արարողութեանէն վերջ, վարժարանի ճաշարահին մէջ սարքուեցաւ սիրոյ սեղան, որու ընթացքին բոլորը բաժակ բարձրացուցին դպրոցի յարատե- ւութեան համար: Խոնք մը աշա- կերտներ պատրաստած էին յայտա- գիր մը, փառաբանելով, ոգեկոչե- լով մեծանուն նախկին շրջանա- ւարտները, պոլսահայ մտաւորա- կանութեան «Կորիզը», որ հասած էր այս պատմական կրթօճախէն, Ջարէճ Խրախունի, Ջահրատ, Վարդ Շիրկահեր, Արամ Գամպուրեան, Եղ- ուարդ Գովան եւ բազմաթիւ ու- րիշներ: Այստեղ եւս յատուկ պատ- զամով միծարուեցաւ Ռոպեր Հատ- տէճեան: Աշակերտները արտասա- նութիւններով ու պատումներով գովքը հիւսեցին այդ անձերուն ու երախտագիտութեան տուրք մա- տուցին անոնց վաստակին հանդէպ:

Հիւրամեծարութեան գագա- թային պահերէն մէկը հանդիսա- ցաւ 200 ամեակի քայլերգի առա- ջին ունկնդրութիւնը: Մանուկ Միւր- թեան նախաձեռնութեամբ գրի

առնուած ու յօրինուած այս քայլեր- գը՝ որպէս նուէր մատուցուելով վար- ժարանի 200-ամեակին: Երաժշտա- կան հիանալի կշռոյթով մը ու ոգեշունչ բառերով «Համեմուած» քայլերգը՝ համահունչ էր նպատա- կին, ուրախալի էր որ աշակերտներն արդէն այդ իսկ սկսած են անգիր սորվիլ ու երգել գայն, որպէս պատ- զամ ապագային ուղղուած: Գնահա- տանքի ծափերով բեմ հրաւիրուեցաւ ու ողջունուեցաւ ուսուցչուհի Վերա Ջրքընօղլուն: Հեռակայ ծափեր ուղղ- ուեցան նաեւ երաժշտութեան հեղի- նակ Մաթակ Թոշիկեանին:

Հուսկ բանքը արտասանեց Վարդան Մ. Վրդ. Գերապայծառը: Ան կարճ խօսեցաւ: Իր մօտ կան- չեց լիսէի բաժնէն Ռոպեր անունով այն պատանին, որ հոյակապ առո- գանութեամբ արտասանած էր Ջա- րէճ Խրախունիի «Հագարին մէկ» բանաստեղծութիւնը: Ըսաւ որ ան- պայման իրարու պէտք է ծանօթա- նան երկու «Ռոպեր»ները, մեր խմբագրապետն ու նորահաս սե- րունդի այս պատանին: Մաղթեց որ ամենակարճ ժամանակի մէջ իրակա- նանայ այդ հանդիպումը, որ կրնայ ճակատագրական ըլլալ պատանի Ռոպերի կեանքին մէջ: Այս առիթով գնահատանքի խօսքերով մեծարեց Ռ. Հատտէճեանը: Մաղթեց որ Մխի- թարեան վարժարանը անխափան գնացքով ու պատուաբեր յաջողու- թիւններով շարունակէ իր երթը:

Մասնակիցները ոգեւոր տրա- մադրութեամբ բաժնուեցան դահ- լիճէն: Կարգադիր յանձնախումբին համար ահաւասիկ բացուեցան 200- ամեակի միջոցառումներու վարա- գոյը, հարթակ պատրաստելով բազ- մաբովանդակ յաջորդ նախաձեռ- նութիւններուն համար:

«Մարմարա»

**HEALTHY MEDITERRANEAN FOOD**

(626) 305 3111  
chickenkingexpress.com  
445 W Foothill Blvd, Monrovia  
Open: Mon - Sat 11 am - 8pm

**Panos**  
Panos bakery coming back soon  
1649 E Washington Blvd, Pasadena, CA 91104

# Մշտանորոգ Իր Երկերով՝ Հանճարեղ Եւ Անկրկնելի Ձապէլ Եսայեանը



## ՅԱԿՈՒՔ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ (Շարունակուած Նախորդ Թիւն)

«Կեղծ Հանճարներ» վիպակը վիպասանին լաւագոյն երգիծական ստեղծագործութիւնն է, որ իր ժամանակին գտած է լայն արձագանգներ ու արժանացած բուռն քննարկումներու: 1905-1907 թուականներուն ան առաջին անգամ հրատարակուել է ետք «Արեւելեան Մամուլ»-ին մէջ, առանձին գիրքով լոյս է տեսած 1910-ին: Այստեղ պիտի ընդգծել, որ գրական քննադատութիւնը սոյն հատորը իր ժամանակին բնութագրեց որպէս «ճշմարիտ արուեստագէտ խառնուածքի արտայայտութիւն»: Արուեստի տեսակէտէ՛ կատարեալ տիպարներ առկայ են այստեղ, իրենց անհատականութեամբ, ամբողջականութեամբ, հետաքրքրական ու կենդանի բնավորութիւններով: Յատկապէս ոսկեցոլուն է գլխաւոր հերոսը՝ Տաճատ Չարքեան տիպարը, որ՝ ինչպէս ենթադրած են ժամանակի քննադատները, ան ունի իրական նախատիպ՝ յանձին Տիրան Չարքեանի (ինտրա): Վիպակին հերոսներուն մասին դիպուկ են Եսայեանի հետեւեալ մտորումները. «Արդարեւ, բոլոր այդ կեղծ հանճարներէն ոմանք սիրած են ու ոմանք այլ տեսակ մը գլխութիւններ շնչած են ինձի. իրենց անկայուն, խռովուած ու պղտոր հոգիները ինձի սիրելի ծախքեր ունեցած են երբեմն: Օրեր եղած են, որ իրենց հոգեբանութեամբ, իրենց յոյսերովը օրօրուած ու իրենց երազներովը երազած են: Զիրենք չեն տեսներ բնաւ թշնամի աչքերով՝ այլ ընդհակառակը, տեսակ մը խանդակաթ հրայրքով, որուն մէջ երբեմն դառնութիւն, երբեմն ցաւ ու երբեմն ալ կարօտ կայ»:

«Հլուները եւ Ըմբոստները» վիպակը (1906)՝ պոլսահայ տառապալեղ կեանքէ քաղուած ու նախապէս թերթի ձեւով տպուած Եգիպտոսի «Ազատ Բեմ»-ի մէջ, համեմատաբար աւելի արմատական ձեւով կը շօշափէ ժողովուրդին ընկերաքաղաքական ազատութեան հարցը: Այստեղ վիպագիրը նկարագրելով քաղաքական հալածանքներու շարժառիթ եղած սուլթանին դէմ կատարուած մահափորձը՝ կ'առաջադրէ «մահ կամ ազատութիւն» սկզբունքը, յանգելով այն եզրակացութեան, որ «ստրկութիւնը եւ ըմբոստութիւնը չէին կրնար գիրար հասկնալ»:

Իրապաշտական-Տոգբանական արձակի գլուխ-գործոցներէն է իր «Շնորհքով Մարդիկ» վիպակը (1907), որուն շուրջ հաւաքուած միտքերն ու կարծիքները ատենին

յառաջացուցին բուռն բախումներ: Ժամանակի «Մասիս»-ը՝ որ դրուատական տողերով գրած է, թէ Եսայեան «հմայիչ նկարագրող եւ խորաթափանց դիտող է», վերառնելով վիպասանուհին տաղանդը կ'ընդգծէ, որ «Տիկին Եսայեան նրբատես հոգեբան մըն է, մեծապէս ընդունակ թարգմանելու մարդկային բոլոր խոր կիրքերն ու յուզումները՝ իրենց հարազատ եւ թաքուն գոյներովը»: Արդարեւ, քաղքենի աշխարհի յոռի բարքերը, եսապաշտութիւնը, մարդու հոգիի այլանդակումն ու աղճատումը սոյն վիպակին մէջ կ'արտացոլան նրբահիւս մանրամասնութիւններով, ընկերային-հոգեբանական ընդհանրացման զարմանալի ուժականութեամբ: Օրինակ՝ Մարգիս եւ Միսաք էֆէնտիները, տիկին Նոյեմին ու Գալէմեանը, Միւսայօ Գալուստը եւ Միքէ էֆէնտիսն «բարձր դասակարգ»-ի անդամներ են, որոնք համար մարդկութեան չափանիշը անոնց գրաւած դիրքին եւ դրամին կշռոյթով կ'որոշուի»:

«Եւփիմէ» վիպակը, որ գրուած է 1909-ին, Օսմանեան սահմանադրութեան հռչակումէն ետք, կեանքի խոր ըմբռնումով յատկանշուող եւ իրապաշտական շարժումով յագեցած, գեղարուեստական լաւագոյն գործերէն մէկն է Եսայեանի: Վիպակը ծանօթ է նաեւ «Երբ Այլեւս Չեն Սիրեր» եւ «Պատուանդանը» խորագիրներով: Նոյն տարուան Ապրիլին երբ իշխանութեան գլուխ կու գան երիտթուրքերը՝ վերջինները կը կազմակերպեն Կիլիկիոյ սպանդը: Այս ծանր ժամանակներուն կը կազմուին մտաւորականներէ բաղկացած պատուիրակութիւններ, որոնք կը մեկնին Ատանա, Մերսին, Սիս եւ այլ բնակավայրեր՝ աշխարհին պատմելու այս բոլորի հետեւանքները: Պատուիրակութիւններու շարքին կ'ըլլայ նաեւ Եսայեան, որ իր շարք մը յողուածներուն - «Չայներ Որբերու Թշուառութենէն», «Աղտի Զոհերէն», եւ այլն - մէջ կը նկարագրէ տեղի հայ բնակչութեան սարսափելի վիճակը՝ փաստեր հաւաքարելով որբերու յուսահատական կեանքէն:

Ձապէլ Եսայեան՝ Արշակ Զօպանեանին եւ ուրիշներու ալ իր ուղարկած նամակներուն մէջ յաճախ անդրադառնալով սահմանադրութեան հռչակումէն ետք օրուան իրավիճակին, կը գրէր, թէ «... կապտութիւնը թեւատ ազատութիւնը է, մեզի համար ազատութիւնը շողողուն բառ մըն է միայն... Ազատութիւնը մենք ինքզինքնուս միայն կրնանք տալ. անիկա իբրեւ

շնորհ չ'ընդունուիր երբեք...»: Ու, ինչպէս նշուեցաւ, «Եւփիմէ» լաւագոյն կը պատկերէ այդ օրուան իրավիճակը, որուն յաջորդած այլ գլուխ-գործոց մէկ վէպը՝ «Աւերակներուն Մէջ»-ը (1911), կը բերգացնէ Կիլիկիոյ հայութեան ողբերգութիւնները, Կիլիկիոյ քաղաքներու ծխացող աւերակներու, հրդեհուած գիւղերու եւ ամաչացած դաշտերու արիւնհանդէսները, որոնք կ'ամբողջացուին վիպագիրին տպաւորութիւններուն վերամբարձ կոտորանքով ու գեղարուեստական պատմում-ակնարկներով: Եսայեան իր «Անէծքը» վիպակին եւ «Սաֆիէ» ու «Նոր Հարսը» գեղարուեստական պատմուածքներուն մէջ եւս կ'արտացոլացնէ Կիլիկիոյ աղէտը:

1911-ին կրկին Պոլիս վերադառնալով՝ այստեղ կը մնայ ան երեք տարի, կը շրջագայի իր ծննդավայրի «որովայն»-ին մէջ, կը մասնակցի գրական-հասարակական կեանքին ու երեք տարի ետք՝ 1914-ին դարձեալ կ'անցնի Փարիզ, ուր կը մնայ մէկ ամիս: Յաջորդ տարի Ապրիլին, Ապրիլ 24-ին ծայր առած ծանօթ ողբերգութիւններուն ժամանակ, շնորհիւ իր մէկ ճարպիկութեան ու հնարամտութեան՝ Եսայեան հրաշքով կ'ազատի ու կ'անցնի Թիֆլիս, ուր հանդէս կու գայ հրապարակային դասախօսութիւններով, մամուլին մէջ յօդուածներով՝ նուիրուած արեւմտահայ ժողովուրդի կացութեան եւ արեւմտահայ գրականութեան: Այստեղ, 6 Փետրուար 1916-ին, «Հայկական Վերջին Հաւածանքները Կ. Պոլսոյ Մէջ» դասախօսական նիւթը կը տպուի տեղի «Մշակ»-ին մէջ: Հրապարակային ելույթներով կը շրջագայի քաղաքէ քաղաք՝ Ս. Փեթերսպոլի, Մոսկուա, Պարս եւ իրան՝ 1918-ին, ապա Միջրան Տաճատեանի եւ քանի մը գաղափարակից գործիչներու հետ կը շրջի միջինարեւելեան երկիրներ (Ադրբայճան, Գահրի, Պէյրութ, Հալէպ, Անթիպ, Մերսին, Հաճըն, Ուրֆա, Ատանա եւ այլուր)՝ կազմակերպելով որբախնամութեան հոգեմաշ գործը Սփիւռքի գանազան գաղութներու մէջ:

1915-ի Մեծ Եղեռնէն Թիֆլիս խոյս տուած ու հոն ապաստան գտած Ձապէլ Եսայեանի արիւնոտ շիջողութիւնները կը տպուին Պաքուի «Գործ» ամսագիրին մէջ՝ «Ժողովուրդի Մը Հոգեվարքը» (1917) եւ «Մուրատի Ճամբորդութիւնը» (1917) խորագրեալ գիրքերուն մէջ: Այդ տարիներուն լոյսի բարիքին կու գան նաեւ իր ուշագրաւ վիպակները՝ «Վերջին Բաժակը» (1916) եւ «Հոգիս Աքսորեալ»-ը (1919): Առաջինը՝ ինքնակենսագրական բնոյթի ստեղծագործութիւն մը, ուր սիրոյ ներշնչման ուժը եւ անհատի ալեկոծ հոգիի ծփանքը կը բախին իրականութեան անյաղթ պատնէշին: Երկրորդին մէջ, մտաւորականութեան կեանքին եւ հոգեբանութեան պատկերն ու անոր ընկալչութեանց եւ գեղագիտական հայեացքներուն համադրութիւնը վիպագիրին պայծառ երեւակայութեամբ կը ներկայացուին ընկերահասարակական կեանքի համապատկերին մէջ:

Եսայեան արդէն Փարիզ էր՝ երբ խորհրդային կարգերն հաստատուեցան Հայաստանի մէջ: Գրագիտուհին գաղափարական իր արեւելումը դէպի խորհրդային կարգեր բացայայտած էր 1918-ի Մայիսին, երբ ան Թեհրանէն հետեւ-

եալը կը գրէր Արշակ Զօպանեանին. «... Բնական է, որ խորհրդայիններու ճամբով պիտի երթայինք: Ինչ որ ալ ըլլայ՝ ուսեր են վերջապէս, որոնք հնարաւորութիւն ընծայեցին մեզի՝ թուրքերու զգրելի տիրապետութենէն ազատելու նոյնինքն կովկասի մէջ»:

Խորհրդային Հայաստանի կազմաւորումէն ետք ինկող ժամանակաշրջանին մէջ կ'իջնայ հրատարակումը վիպագիրին «Նահանջող Ուժեր» (1923) քաղաքական վէպին, որուն մէջ Եսայեան վիպական ծաւալուն կտաւի վրայ առաջին անգամ նիւթ կը դարձնէ քաղաքական հոսանքներու պայքարը, Ա. Աշխարհամարտի տարիներուն հայկական կուսակցութիւններու գործունէութիւնն ու անոնց միջեւ բախումները, նաեւ այդ կուսակցութիւններուն դիրքորոշումը Խ. Հայաստանի հանդէպ: Սոյն վէպին մէջ Եսայեան պաշտպանելով խորհրդային կարգերը եւ բուռն հակադարձելով Խ. Հայաստանին հակադրուողներուն՝ կ'ընդգծէ, որ «... ժողովուրդը կը կորսուի, բայց Հայրենիքը կը փրկուի»: Ան յախուռն ելույթներ կ'ունենայ Սփիւռքի այն գանգուածներուն դէմ, որոնք կը փորձեն սփիւռքահայութիւնը անջատել Մայր Հայաստանէն եւ անտեսել Սովետական Հայաստանի գիտական, կրթական, գրական, մշակութային ու արուեստի բնագաւառներէ ներս ձեռքբերուած մեծ նուաճումները:

20-ական թուականներուն լոյս տեսած իր արժէքաւոր ստեղծագործութեանց շարքին է «Պրոմէթէոս Ազատագրուած» (1928) ծաւալուն գիրքը, որուն երկունքը սկսած էր 1926-ին՝ երբ վիպագիրը առաջին անգամ ըլլալով կ'այցելէր Սովետական Հայաստան: Գիրքին տեսական-քննադատական շարք մը յօդուածներուն մէջ Եսայեան բացատրիկ նուրբ նկատառումներ ու դիտողութիւններ ունի պրոլետարական (բանուորական) գրականութեան առանձնատկութիւններուն վերաբերեալ: Ան կ'երթայ այնքան առաջ իր համոզումներուն մէջ, որ Սովետական Միութիւնը կը համարէ «մեր հարազատ հայրենիքը, որ ցոյց կու տայ նոր կարգերու արդարացիութիւնն ու նպատակներու վեհութիւնը»:

1933-ի գարնան երբ վերջնականապէս կը հաստատուի Խ. Հայաստան, բնականաբար Եսայեանի համար կը բացուին կեանքի ու ստեղծագործութեան նոր ուղիներ եւ յոյսի որոնումներ: Յաջորդ տարի մասնակցելէ յետոյ Սովետական Միութեան գրողներու Ա. համագումարին, նոյն շրջանին լոյսի բարիքին կու գայ իր «Կրակէ Շապիկը» (1934) վիպակը, յաջորդ տարի՝ «Սիլիստրի Պարտէզները» (1935) վէպ-յուշագրութեան Ա. հատորը, երբ դեռ չէր սկսած Կենտկոմի Ա. քարտուղար Աղասի Խանջեանի սպանութեամբ (9 Յուլիս 1936-ին) Եղիշէ Չարենցի դէմ խաչակրական հալածանքներու եւ հանճարեղ բանաստեղծը դատաւարութեան ենթարկելու վտանգաւոր տարողութիւնը երկրին մէջ: Ապա, 1936-ի վախճանէն առաջ գրուած (հրատարակուած 1966-ին. քաղաքական ու այլ իրավիճակներու բերումով հեղինակը դժբախտաբար չհասցուց գայն հիմնաւորապէս վերամշակելու) վիպագիրին «Պարպա Խաչիկ» ծաւալուն վէպին կը յաջորդէ լոյս ընծայուած «Երկեր» ծաւալուն ժողովածոյին, որուն

# Բառերու Խորհրդաւոր Աշխարհը Յրդեհ



## ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Ո՛ւր սկսաւ հրդեհը: Ո՛վ պատճառ եղաւ անոր: Ականատե՞ս կայ: Հաւանաբար: Իսկ, կարելի՞ է ստուգել, թէ ճիշդ ե՛րբ ծայր առեր է ան: Հապա՞ վնասը: Այս հարցումները պատասխանելու համար, պէտք է մանրազննին ստուգել ապացոյցները, խօսիլ ականատես անհատներու հետ եւ հասնիլ անտարակուսելի եզրակացութեան: Յարգելի ընթերցող, իւրաքանչիւր հրդեհի համար կը նշանակենք հետազոտող մասնագէտ մը, որպէսզի գոհացուցիչ պատասխաններ ստանանք, աւելի կարեւորը՝ տուժածները ստանան արդար փոխհատուցում: Կասկած չկայ, թէ շաբաթ մը առաջ տեղի ունեցած ողբերգական հրդեհներու համար բազմաթիւ քննիչներ արդէն պաշտօնի վրայ են: Իսկ ես որոշեցի հայկական գրական հրդեհներու քննութիւն մը կատարել, եւ հասկնալ, թէ ո՛վ պատճառ եղաւ որ փոռկի «հրդեհ» բառը: Կը փափաքիմ նաեւ գիտնալ անոր պատճառած վնասը, այսինքն ո՛ր բանաստեղծի սիրտը այրեցաւ, ո՛ր տաղասացի հոգին մոխիր դարձաւ: Ուստի, կ'առաջարկեմ, որ մենք հայոց քնարական աւերակներու վրայ քալենք, ընթերցենք գրաւոր վկայութիւններ եւ դեռ մխացող տողիկները գննելով հասկնանք, հրդեհե բառի չմարած պատմութիւնը:

**Կասկածելի հրդեհը**  
Թէեւ «հրդեհ» բառին մենք չենք հանդիպիր հայկական հնագոյն բանահիւսութեան մէջ, սակայն վահագնը, մարտի եւ ամպրոպի մեր աստուածը ծանօթ էր անոր «հուր» արմատին, քանզի իր ծննդեան վայրկեանին մեր պատանեկիկը «Հուր հեր ունէր»: Այժմ, գիտենք, թէ «հրդեհ» բառի առաջին բաղադրիչը «հուր» է, իսկ «դեհ» կոչուածը՝ առեղծուածային: Ինչպէս բազմաթիւ հրդեհներու ծագումը անյայտ է, նոյնպէս ալ «դեհ» բառը կը մնայ որպէս անլուծելի հանելուկ՝ լեզուագէտ մեր այրերու համար: Նոր ժամանակներուն բառս նշանակեց ժողովրդական մեծ յուզումը եւ ըսինք՝ «Յեղափոխութեան հրդեհը»: 19րդ դարուն արդէն դարձուած էր ան. «Հրդեհի կերակուր դառնալ»: Իսկ դարսեցի ինքնատիպ առակագիր Մկրտիչ Կորիւնը խրատական խօսքը մը աւանդեց մեզի. «Յիմարը կրնայ ծովն ալ հրդեհել»:

**Այրեցաւ երկրորդ հրեշտակը**  
Երբ տեսայ, թէ հայկական նախամաշտոցեան բանահիւսութեան մէջ կը բացակայի «հրդեհ» բառը,

ես թերթեցի Սուրբ Գիրքը: Նկատեցի, թէ «հրդեհ» գոյականը մէկ անգամ գործածուեր է, իսկ «հրդեհել» բայը՝ չորս անգամ: Հետաքրքրական էի «բնութիւն հրդեհեալ» եւ «յակինթ հրդեհեալ» արտայայտութիւնները: Սակայն, զիս սարսափեցուց Յայտնութեան գիրքի մէջ լիշուած երկրորդ հրեշտակի պատկերը, թէ շեփոր մը պիտի հնչէր եւ ան այրող լեռան մը նման պիտի իյնար ծով «Երկրորդ հրեշտակն փողեաց, եւ իբրեւ զլեռուն մի մեծ հրդեհեալ անկաւ ի ծով»:

**Հրդեհի երկար լեզուն**  
Չարմանալի չէ, որ «հրդեհ» բառը աճեցաւ եւ կլանեց ամբողջ հայերէնը: Չէ՞ որ մեր լեզուն մրգաստան մըն էր, ինչպէս մեր երկիրն էր «դրախտ», այսինքն բառացիորէն «ծառաստան»: Ըստ գրաւոր վկայութիւններու ան նախ տարածուեցաւ վանքերու մէջ, հաւանաբար ձեռագրատան մը մէջ: Պարխայները համեմատելի չէին «հրդեհ» բառի հսկայ բոցերուն հետ, եւ «հրդեհ» բառը բարձրացաւ սարեր, ուր հովուերգակ հովիւը իր սրինգը կը նուագէր, մտաւ գիւղեր, ուր աշուղը իր սիրոյ տաղը կը հիւսէր, հասաւ դաշտեր, ուր քնարերգակ բանաստեղծը կ'երագէր ուռնիի մը շուքին տակ, ապա այրեցաւ Կովկասը, ուր Տէրեանը մենակ նստած էր հրդեհուած ամպեր դիտելով, իսկ վերջապէս հրդեհի լեզուն լափեց Պոլիսը, ուր Դուրեաններու եւ Չարիֆեաններու հոգիները մոխիր դարձան: Մեր տղաները, աւաղ, հրդեհի դէմ գրիչ մը ունէին լոկ: Հեգնական է որ, հրդեհը, որ ունի քանդելու սոսկալի ոյժ, միեւնոյն ժամանակ ծնունդ տուաւ գրական գոհարներու: Այժմ ընթերցենք քանի մը կրակոտ տողիկ:

**Արեւելքի հրդեհները**  
Ազգային ազատագրութեան օրերն էին: Ռափայիլ Պատկանեանը Նոր Նախիջեւանէն դիտեց իր հայրենիքը, տեսաւ, թէ աներկիր, «կիսակենդան», «սողացող» հայը վշտահար էր: Հրդեհուած այդ պատկերը ճմլեց իր սիրտը: Այդ անձուկ օրերուն զարգացած ազգերը ի՞նչ վերաբերմունք ունէին հայու հանդէպ: Պիտի պաշտպանէի՞ն իրենց քոյր երկիրը: Բանաստեղծը բացատրեց. «Փոխան շիջելու նախանձը մարդոց / Սաստակացաւ, աւաղ, գերդ հրդեհ ու բոց»: Աւետիք իսահակեանը լաւ գիտէր, թէ իր գրածները ի՞նչէր կրնային գործել: Այդ համոզումով ալ գրեց. «Եւ խօսքս մուրճ էր, եւ խօսքս՝ հրդեհ»: Կրակոտ մէկ այլ բանաստեղծ էր Եղիշ Չարենցը: Ան

անհամբեր էր: Անձկութեամբ կը սպասէր գալիքը: Չարենցը ըսաւ. «Կրակ կայ արտիս մէջ, կրակ կայ, / Հրդեհ է՝ վառուած է հրկէզ»: Եւ ահա վահան Տէրեանը... Ո՛չ ճակատի վրայ է ան, ո՛չ ալ պաշքարի մէջ: Չայն գտայ ամպերու տակ: Երագկոտ: Մենակ: Մտազբաղ էր սիրոյ եւ մահուան միտքերով: Ան նախ նկարագրեց իր անտեսանելի եւ խորհրդաւոր սիրածի անխօս աչքերը. «Քո աչքերի խորութիւնը հրդեհավառ»: Ապա հարցում մը ուղղեց տիրադալուկ աղջկան. «Մահու գիշերն է մի՞նել իմ հոգում, ... / Մի՞թէ դու պիտի վառես նոր փափագ, / Մի՞թէ դու պիտի հրդեհես յուզումե: Մի՛ ըլլաք երկչոտ: Մարդամտիկ է վահանը: Ունի քնքոյց սիրտ: Սօսեցէք եւ հարցուցէք անոր. Ինչո՞ւ ես մենակ նստած: Ու ան պիտի պատասխանէ. «Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում, / Իրիկնաժամին նստում եմ մենակ»: Յարգելի ընթերցող, դուք չէ՞ք ուզեր Պոլսոյ հրդեհները դիտել, - կամ ընթերցել, - ինչպէս որ կը փափաքիք:

**Շքեղ հրդեհը**  
Պոլիսը... Հրդեհ... Այրած քնար... Չենք գիտեր ի՞նչ էր պատճառը, բայց քաղաքներու թագուհին պատճառ եղաւ որ հայ բանաստեղծը «կերակուր դառնա» հրդեհներու: Բայց հրդեհակուլ չեղա՞ ան յաջողեցաւ մեզի թողուլ քանի մը վառ տողիկ: Դանիէլ Վարուժանը, յարգելի ընթերցող, Սեբաստիոյ դաշտերու վրայ սայլեր տեսաւ: Փոքրիկ Դանիէլը հիացումով դիտեց զանոնք: Տարիներ վերջ տղան գրեց. «Մայլեր կ'երթան, անդորրութեան մէջ / Աղաղակելով... Կը տանին արեւ, հրդեհ կը տանին / Հսկայ դէզերով»: Իսկ վենետիկի մէջ մէկ այլ հրդեհի հանդիպեցաւ ան՝ Հ. Ղեւոնդ Ալի-

շանի: Լուռ ննջող վարդապետի շիրիմին առջեւ Վարուժանը աղօթեց. «Կարմիր հրդեհ մ'որ մոխրի տակ կ'առնէ քուն. / Հոս կը ննջես. ինչպէս հրատն ամպին տակ»: Մատթէոս Չարիֆեանը, որ չունէր հիւանդագին հոգի, բայց տառապեցաւ ճակատագրի յամառ եւ դաժան հարուածներէ: Մինչ Չարիֆեանի մարմինը կը քայքայուէր, անոր հոգին՝ ... Ինքը, Մատթէոսը բացատրէ. «Հոգիս հրդեհ մ'է շքեղ»:

**Հրդեհ, ո՛չ մատեան**  
Պոլսոյ հրդեհէն տառապած հոգի մըն է Պետրոս Դուրեանը: Դո՛ւք, ընտիր գրականութեան հրդեհով տոչորած յարգելի ընթերցող, լաւ գիտէք անոր պատճառը: Կը չի չէ՞ք, այդ 19 տարեկան տղան, մեր տղաներէն շատ աւելի երիտասարդ, ի՞նչ հրդեհներու դէմ պայքարեր էր... Իր վերջին օրերուն, 1896 եւ 1871 թուականներուն ետեւ ետեւի գրեց. «Մեռնիլ թարմ ու երազոտ... մեռնիլ առանց շուրթեր համբուրով մը բորբոքելու, առանց հոգին ժպիտով մը հրդեհելու... Սիրեցի քեզ, Շաղի, շողի ժամք էին. / Վարդից հրդեհ կար չ'երկին»: Իսկ տղան, «Լճակ» քերթուածի մէջ տղան խօսեցաւ լճակի հետ եւ բացատրեց անոր, թէ պէտք չէ՛ ապշիլ, պէտք չէ՛ կարծել, թէ տրտմագին սիրտը եթէ պատուենք հոն կը գտնենք մատեան. «Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան»:

**Վերջին հրդեհը**  
Հայ տպագիրը ամէնուր կը քոտ աշխատանք տուաւ որպէսզի հրատարակէ մեր հրկիզուած խօսքերը: Կրակոտ աշխատանք էր վենետիկէն մինչեւ Թիֆլիս: Հագուազիւտ են այդ գիրքերը: Կարելի է ըսել, թէ

Շար.ը էջ 19

**PAINTING CLASS**

1st Session Free

**Teacher: Rita Shahinian**

1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104

**REGISTER NOW**

Every Friday  
4:30 PM - 5:30 PM

By Calling to  
**+1(626) 318-0544**

**\$ 30 FEE / Month**

Instagram.com/norserountlosangeles  
facebook.com/norserountculturalassociation

# Անյայտ Հայ Նկարչի «Սուրբ Սարգիս» Կտաւը Կը Ցուցադրուի Հայաստանի Ազգային Պատկերասրահում



Փետրուարի 11-16-ը, Սուրբ Սարգիսի տօնին ընդառաջ, Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների սրահում կը ցուցադրուի 19-րդ դարի անյայտ հայ նկարչի «Սուրբ Սարգիս» սրբապատկերը:

«Սուրբ Սարգիս» կտաւում պատկերուած են հայոց եկեղեցու ամենասիրելի սրբերից մէկը՝ Սարգիս զօրավարը եւ նրա որդին՝ Մարտիրոսը, որոնք 14 զինուորների հետ նահատակուել են յանուն քրիստոնէութեան:

Կոստանդիանոս Ա. կայսեր կողմից Կապադովկիայի իշխան եւ սպարապետ նշանակուած Սուրբ Սարգիսը նաեւ քարոզիչ էր, նա քանդում էր իր իշխանութեան տակ գտնուող մեհեաններն ու կառուցում եկեղեցիներ՝ նպաստելով քրիստոնէական հաւատքի տարածմանը:

Նրա կեանքի ու վարքի պատումները յաճախ են հանդիպում որմնանկարներում, միջնադարեան ձեռագրերում ու եկեղեցական կիրառական առարկաների վրայ: Պատկերագրութեան մէջ Սուրբ Սարգիսը սովորաբար ներկայացուած է հեծեալ զօրավարի կերպարանքով՝ վիշապին նիզակահարելիս: Հայ արուեստում յաճախ է հանդիպում որդու՝ Մարտիրոսի հետ պատկերման տարբերակը:

Նկարը Ազգային պատկերասրահ է բերուել Աշտարակի Կարմ-

րաւոր եկեղեցուց, որտեղ պահպանուել է նաեւ Սուրբ Սարգիսի պատկերող 7-րդ դարի որմնանկար: Պահպանուել է տեղ-տեղ վնասուած հետեւեալ գրութիւնը՝ «Յիշատակ է, պատկեր ի վարդազարի որդի Ստեփանին, որ. ՌՆ Ամէնափրկիչ սբ. եկեղեցուն ՄՀ թվն»:

Երիտասարդների եւ սիրոյ բարեխօս Սուրբ Սարգիսի յիշատակութեան օրը հայ եկեղեցու տօներէից է: Այն ընդունուած է նշել թէ՛ եկեղեցական ծիսակարգով ու աղօթքներով, թէ՛ աշխարհիկ աւանդոյթների համաձայն: Տօնին նախորդող գիշերը երիտասարդներն աղի բլիթ են ուտում, որի հետ կապում են իրենց ապագայ ընտրեալի յայտնութիւնը երագում: Սովորոյթներից է նաեւ փոխինձով մատուցարանը դնել տան տանիքին կամ պատշգամբին:

Ըստ աւանդոյթի՝ եթէ Սուրբ Սարգիսը հրեշտակների ուղեկցութեամբ անցնում է եւ ալիւրի կամ փոխինձի վրայ թողնում ձիու պայտի հետքը, ապա այդ տարի իրականանում են երազանքները:

Երիտասարդներն այս օրը միմիանց բացիկներ եւ քաղցրաւենիք են նուիրում: Տօնի առթիւ Սուրբ Սարգիս Զօրավարի անունը կրող եկեղեցիներում մատուցում է պատարագ եւ կատարում է երիտասարդների օրհնութեան կարգ:

# Միջին Արեւելքը Իր Ներկայ Դիմագիծով

Շարունակուած էջ 7-էն

զը փափաք կը յայտնէ որ Սուրբիան ըլլալ կայուն իր բազմազան բնակչութեամբ:

Ամէն բանէ առաջ սակայն թուրքիան կ'ուզէ լուծել Բօճաւա-ի իրավիճակին հարցը, որ Հիւսիս-Արեւելեան շրջանի պաշտպանական ուժը կը հանդիսանայ (SDF):

Բօճաւա քրտական հակակշռի տակ է, որ թուրքիոյ ակնոցով PKK ահաբեկչական կազմակերպութեան կը յարի: Կայ նաեւ 3.5 միլիոն սուրիացի գաղթականներու հարցը որոնք թուրքիոյ բնակչութեան բացարձակ մեծամասնութեան պահանջն է որ անոնք վերադառնան Սուրիա եւ դադրին թուրքիոյ անտեսութեան վրայ ծանր բեռ ըլլալէ: Հարցը ցարդ կը մնայ անլոյծ:

### ՌՈՒՍԻԱ

Ներկայ Սուրիոյ պարագային տակաւին յստակ չէ թէ Ռուսական խորհրդները պիտի շարունակեն մնալ Լաթաքոյ եւ Թարթուսի մէջ: Ռուսիան ըստ երեւոյթին որոշած է մնալ Միջերկրականի այդ աւազանին մէջ:

### ԻՍՐԱԵԼ

Իսրայէլ կը շարունակէ ռմբակոծել Սուրիոյ Արեւելեան շրջանին մէջ գտնուող իրանեան ուժերը: Ան նաեւ կ'ամրապնդէ Կոլանի իր դիրքերը:

### ՍՈՒՐԻՈՅ ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԱՐՅԸ

Սուրիոյ վերաբերեալ մեր ներկայացուցած ընդհանուր պատկերը այն ցոյց կու տայ թէ երկրին ապագան կը մնայ անորոշ: Ի վերջոյ երկրին մէջ կան երկու ուժեր որոնք իրարու դէմ կը պայքարին:

Իրենք գիրենք արեւմտամէտ, գործնապաշտ եւ չափաւորական դաւանող ուժեր (HTS), որոնք կը խոստանան Սուրիան պահել ամբողջական՝ իր բազմազանութեամբ, զայն փրկելով ծայրագոյն իսլամ տիրապետութենէն, որուն ականատես եղանք տասնամեակ մը առաջ: Լաւագոյն պարագային Սուրիոյ ապագան կրնայ անցնիլ Սիւննի (Salafist) մեծամասնութեան մը ձեռքը: Միապետական (autocratic) վարչակարգի տակ: Տրուած ըլլալով որ Սուրիան ժողովրդավար վարչակարգ չէ ունեցած իր բովանդակ պատմութեան ընթացքին: Առաւել այն երկիրները՝ Իրաք, Սուրիա եւ Լիբանան, որոնք «Ձախողած Պետութիւններ» (failed states) կոչուեցան, փաստօրէն տարբեր փոքրամասնութիւններով կառավարուած պետութիւններ են: Վերջերս հրապարակուած վիճակագրական տուեալներով, քրիստոնեայ բնակչութեան թիւը բազմապատկազմ տասնամեակ մը առաջուան 8%-ին, 2%-ի իջած է:

Միջին Արեւելեան երկիրները բաւական մօտէն ճանչնալով, անոնց ներկայ իրադրութիւնը մեզ կը մղէ մտածելու,

թէ փոքրամասնութիւններ, որոնց շարքին նաեւ հայութիւնը, այլեւս կրնան տեղ չունենալ Միջին Արեւելքի իսլամական աշխարհին մէջ: Իբր հետեւանք, նախատեսելի արտագաղթի նոր ալիքի մը հաւանականութեան դիմաց, մեր ղեկավարութեան կը մնայ համապատասխան միջոցառումներ կատարել, կարելի բոլոր միջոցներով աջակցելու եւ նախընտրաբար դէպի Հայաստան ուղղելու համար յետագայ շարժերը եթէ անոնք անխուսափելի դառնան:

Եզրակացնելով Միջին Արեւելքի մասին մեր խորհրդածութիւնները, կրկնութեան գնով կ'ուզենք հետեւեալը ըսել:

Ա) Պաղեստինի Արեւմտեան Ափին (West Bank) եւ Կազայի պաղեստինեան բնակչութեան իրավիճակը կը շարունակէ մնալ անորոշ եւ մտահոգիչ: Իսրայէլի ներկայ ծայրայեղ ազգայնական եւ կրօնամոլ իշխանութիւններուն վերջնական նպատակը կը մնայ Արեւմտեան Ափէն բռնի դուրս քշել պաղեստինցիները եւ տարածաշրջանը կցել Իսրայէլի, ինչպէս եղաւ Կոլանի պարագային: Իսրայէլի մէջ կան նաեւ իրապաշտ հոսանքներ որոնք կը խորհին թէ միակ ձեւը հրեայ եւ պաղեստինցի ժողովուրդներուն խաղաղ ապրելու կողք-կողքի, Երկու Պետութիւն լուծումն է (two state solution): Իսրայէլ ներկայիս կը տառապի ինքնութեան տագնապէ (identity crisis): Իրեն կը մնայ լուծել այդ կնճռոտ հարցը:

Բ) Թուրքիան ինքն ալ ունի ինքնութեան տագնապ մը: Երկիրը ներկայիս բաժնուած է երկու յստակ մասերու, ինչ որ տեսանք վերջին ընդհանուր ընտրութեանց պարագային: Արեւմտամէտ Քեմալական եւ իսլամական: Առաւելաբար Անատոլուի կեդրոնական գանգուածը: Առաւել՝ Թուրքիան ունի իր «Աքիլլէսի Կոունկը», որ իր տնտեսական տագնապն է եւ քրտական հարցը: Առանց այդ խիստ կարեւոր երկու հարցերու լուծման, Թուրքիան կը շարունակէ պառակտուած մնալ, անկարող դեր մը ունենալու Միջին Արեւելքի մէջ, հակառակ իր աշխարհաքաղաքական բացառիկ դիրքին եւ կէս միլիոն հօր բանակին:

Գ) Իրանը ուրիշ կարեւոր երկիր մը Միջին Արեւելքի մէջ դէպի ետ նայող՝ 1979-ի իսլամական Յեղափոխութենէն ասդին: Տնտեսական եւ քաղաքական յառաջդիմութիւն ապահովելու համար պարտաւոր է դէպի ապագայ նայելու: Ան ունի շատ ուշիմ ու զարգացած իգական սեռ մը, որուն պարտի աւելի լայն իրաւասութիւններ շնորհել: Այլապէս, որպէս ընտրանք իրեն կը մնայ Հիւլէական ուժի տէր դառնալ: Ան այսօր կը տարուբերի այս երկու ընտրանքներուն միջեւ:

Դ) Վերջապէս, համաշխարհային (global) առումով, կը մնայ Նախագահ Թրամբի դերակատարութիւնը: Զուտ ուժի վրայ յենելով ան մինչեւ ուր կրնայ հասնել Ամերիկան, ժամանակը ցոյց պիտի տայ:

2եր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

### Սիրոյ Պատուիրանը

Շարունակուած էջ 13-էն

սիրեն իրենց անձին պէս: Այս տեսակ սէրը աստուածային սէր մըն է, որ անձնագոհ, անյիշաչար, ազնուաբարոյ, ծառայատէր է: Այս տեսակ սէրն է, որ կը մղէ քրիստոնեայ հաւատացեալը ընդունելու ու ըրչները իբրեւ իր Երկնաւոր Հօր գաւակները, իր եղբայրներն ու քոյրերը: Այս սէրն է, որ կարելի կը դարձնէ տեսնելու մարդոց ներքին գեղեցկութիւնը: Այս սէրն է, որ թոյլ կու տայ մարդոց տեսնելու՝ ուրիշներ առանց նախապաշարումի, առանց դատելու գանոնք, առանց կանխակալ կարծիքներու: Այս սէրն է, որ իմաստութիւն եւ երկնային շնորհ կու տայ ուրիշներ դիտելու «Քրիստոսի աչքերով»:

Արդ, եթէ մէկը կ'ուզէ լի-իրաւ կեանք մը ապրիլ, յաւիտենա-

կան կեանք ունենալ, երկինքի թագաւորութիւնը ժառանգել, Յիսուսի պատգամը նոյնն է, ինչ որ էր զինք հարցաքննող օրինականին... «Սիրէ քու Աստուածդ քու ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ զօրութեամբ եւ ամբողջ մտքովդ: Եւ սիրէ ընկերդ քու անձիդ պէս»:

Սակայն, այս աստուածատուր պատուիրանները գիտնալ բաւարար չէ: Իսկանը անոնց գործադրութիւնն է: Օրինականը մանկութենէն իվեր իրագեղ էր այդ պատուիրաններուն, բայց չէր գործադրած գանոնք: Յիսուսի պատուէրը անոր, ինչպէս նաեւ բոլոր մարդոց, հետեւեալն է. Ոչ միայն բանիւ այլ գործով, «Սիրէ գԱստուած քու ամբողջ հոգեամբդ, սիրէ նաեւ քու ընկերդ քու անձիդ պէս»: Այդ է սիրոյ պատուիրանը:

### Հայուն Աւանդութիւնը

Շարունակուած էջ 15-էն

թիւնը ճիշդ չէ: Ժողովուրդ մը կ'ապրի իր աւանդութիւններով: Աւանդութիւններով ապրելը չի նշանակեր, թէ պիտի ապրինք կեթոյական դրուածքով: Կարելի չէ համամարդկային կեանքի ու անոր հաղորդակցութեան մէջ մտնել, ընդունիլ, յարգել եւ գնահատել ուրիշը, երբ մենք մեր ինքնութիւնը չենք գիտեր:

Աստուածաշունչի դաստիարակութիւնը այս իմաստով շատ դիպուկ է. «Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս» (Մատթէոս 22:39):

Եթէ քու անձը չսիրես, այսինքն ինքնութիւնդ, մշակոյթդ, լեզուդ, հաւատքդ, այսինքն՝ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆԻ, պիտի չկարենաս տեսնել ուրիշը՝ «ընկերդ», իր լեզուաւորութեամբն եւ ազգային աւանդութիւններով: Ազգային աւանդութիւնը պահելը, կերտելն ու վերակենսաւորելը պիտի առաջնորդեն համազգային արժէքներու գիտակցութեան: Եթէ հայը այսօր հարկադրուած է բացուելու աշխարհին, այս պիտի նշանակէ, որ շատ աւելիով պիտի ամրապնդէ իր աւանդութիւններն ու վերակենսաւորէ զայն զայն աւելի ուժեղ եւ օգտաշատ ձեւով հաղորդակցելու բազմակրօն եւ բազմամշակութային աւանդութիւններով լեցուն համակարգերու հետ:

Աշխարհ այսօր խառնիճադանձ մթնոլորտի մէջ է: Մարդը կը փնտռէ ու կը փորձէ ստեղծել նոր համակարգեր, նոր արժէքներ, նոր չափանիշներ ու երեւի տակաւին՝ նոր «աստուածներ»: Հայը պէտք չունի այս խառնիճադանձ մթնոլորտներուն ստեղծած ու սարքած

«նոր»-երը կիրարկելու: Հայը ունի իր ազգային աւանդութիւնը: Ինչպէս վեհափառ հայրապետը կը յորդորէ, պէտք է՝ «Հաւատարիմ մնալ մեր աւանդութիւններու նկատմամբ»: Աւանդութիւնը «անփոխելի ու անհաղթելի երեւոյթ չէ» (Արամ Ա. վեհափառ հայրապետ 2025): Եթէ պիտի բարեփոխենք եւ պատշաճեցնենք մեր աւանդութիւնը ներկայ օրերու աշխարհի սլացքին հետ եւ պէտք է որ ընենք, պարտինք փոխել «կեղեւը», բայց՝ պահել «միջուկը» (Արամ Ա. վեհափառ հայրապետ, 2025):

Իսկ միջոցակէզ: Հայն է: Հայուն ինքնութիւնը, մշակոյթը, լեզուն, հաւատքը, աւանդութիւնը: Հայուն աւանդութիւնը հայը ապրեցնողն է: Հայուն աւանդութիւնը հայուն «ընդհանրական ու գերագոյն արժէքներն ու իտէալները, իրաւունքները եւ պահանջները արծարծ պահող կենդանի յուշարարներն է» (Արամ Ա. վեհափառ հայրապետ, 2025):

Հայը իր աւանդութեամբ է, որ կը դառնայ ազգային: Հայը իր աւանդութեան մէջէն ու անոր միջոցով է, որ լաւապէս կրնայ մտնել համազգային ու համամարդկային իրավիճակներուն մէջ:

Պիտի պահենք ազգայինը: Ազգայինը պահելով՝ կրնանք կերտել նաեւ համազգայինը եւ մտնել համաշխարհային քաղաքակրթութեան մէջ:

Ազգայինը - համազգայինի կամըջող օղակը: Հայուն աւանդութիւնն է:

Հայը պիտի պահէ իր աւանդութիւնը: Բայց անպայմանօրէն պիտի վերակենսաւորէ զայն:

### Մշտանորոգ Իր Երկերով՝ Հանճարեղ

Շարունակուած էջ 16-էն

մէջ գրողը ստեղծած է ներկայ եւ անցեալ կեանքի պատկերներ, որոնք իրենց գեղարուեստական ու գաղափարական աւշայորդութեամբ կ'ապուած են սովետական գրականութեան փորձին:

«Սիլիհատարի Պարտէզները» ինքնակենսագրական վէպը, օրինակի համար, սոսկ կեանքի մը պատմութիւնը չէ՝ մեծ ու փոքր դէպքերու, պատահարներու յաջորդականութեամբ: Եսայեան այս վէպին մէջ յաջողած է խտացնել ժԹ. դարու 80-90-ական թուականներու պոլսահայ կեանքը՝ ընկերային, կենցաղային, քաղաքական բազմակի դրսեւորումներով ու հոգեբանական վերապրումներով, որոնք կ'արտացոլացնեն գրողին ծննդավայրը, մանկութեան յիշատակները: Նորավէպերու շարք մըն է այս երկը, ուր իւրաքանչիւր նորավէպ ունի իր խորագիրն ու հերոսը, մարդոց ցաւի պատմութիւններն ու յոյսերը, երազները, փոխարարներու թիւնները՝ ողբերգական հնչեւրաններով գեղեցիկ:

Գրականութեան ֆոնի վրայ՝ Եսայեան-Չարենց փոխհամակրական կապերու մասին յաճախ են գրուած: Այս իրողութիւնը ակնյայտօրէն կը ցոյց Չարենցի արխիւներուն մէջէն: Չարենց՝ որ 27 Նոյեմբեր 1937-ին գոհ գնաց ստալինեւերիական հակամարդկային, հրէշային եղեռնագործութեանց ու սպաննուեցաւ բանտի մէջ եւ որուն գերեզմանը ցարդ այսօր է, մեծ համարում ունէր Եսայեանի հանդէպ, որ 1936-ին, Հայաստանի Գրողներու Միութեան ժողովին մէջ եւ Չարենցի բանտարկութենէն մէկ ամիս առաջ արտասանած էր հետեւեալ խօսքը, որ կու տանք՝ քաղելով Երեւանի մէջ 2007-ին հրատարակուած Չարենցի «Վերջին Խօսք» հատորէն (էջ 106), որ կը բովանդակէ բանաստեղծին անտիպ բանաստեղծութիւններն ու այլ փաստագրութիւններ. «Եղիշ Չարենցը մեր ամենամեծ բանաստեղծն է, այդ անուրանալի է բոլորիս համար: Նրա տաղանդը շողջողուն լոյսի պէս շլացնում է մեզ... Մեզա-

նից շատերի անունները կը կորչեն, բայց զալիք սերունդները չեն մոռանալ Չարենցին: Թերեւս մեզանից ոմանց անունները անցնեն զալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Չարենցի արժէքով մէկի հանդէպ եղել են արդար կամ անարդար»:

Արդարեւ, զալիք դարերուն ալ, թէ՛ Ե. Չարենցի եւ թէ՛ Չ. Եսայեանի անուններն ու գործերը յաւերժօրէն պիտի շողջողան հայ գրականութեան երկնակամարին վրայ: Երկու անջատ մեծութիւններ՝ որոնց գերեզմանները մնալով անյայտ, անոնց վաղաժամ մահով մեր յոյգերուն վրայ աստղնտող անփարատելի կոտտանքը դեռ պիտի տեւէ երկար՝ դարերու լայնքով ու երկայնքով:

Չարենցի եղերական վախճանէն շատ չանցած, բազմաթիւ այլ մտաւորականներու շարքին, Ստալին-Բերիա հրէշներու ոճրագործութեանց չարաշուք օր մը ձերբակալուեցաւ, աքսորուեցաւ ու աքսորէ աքսոր հիւժած մահացաւ Չարենցի Եսայեան՝ իբրեւ պաշտպան Չարենցներու, Թոթովենցներու, Բակունցներու ե՛ւ մարդկային արդարութեան, իբրեւ մեծ երախտաւոր մարդկային միտքի հօր արարումներու:

2023-ին, Երեւանի թիւ 180 հիմնական դպրոցը կոչուեցաւ Չարենցի Եսայեանի անունով:

Կարգալ Չարենցի Եսայեան՝ կը նշանակէ գրական ու խոհատանող բազմաճիւղ ուղիներ բանալ դէպի համամարդկային անդաստաններ, ուր ամէն օր մշտանորոգ կը դալարին գեղեցիկ ոճի ու ճաշակներու գրական պարտէզները հանճարեղ ու անկրկնելի մեծ վիպասանուհիին: Ուր կ'անձրեւեն սիրոյ եւ կանանց ապրումներու անդադրում երգերը, վէպերու վիրաբաց արցունքները, արցունքին անկործանելի իմաստութիւնը, որոնք կը պարզեն գրական ուխտագնացութիւն դէպի յաւերժութիւն...:

«Աղթամար»-«Ծաղիկ»

### Հրդեհ

Շարունակուած էջ 17-էն

արդէն «մոխիր դարձան» այդ օրերը: Բայց ես, յարգելի ընթերցող, յաջողեցայ այրած քանի մը էջ փրկել հին քաղաքներու հին գրավաճառներէն: Անտեսուած կոյտերու մէջ էին անոնք: Իսկ այժմ գոնէ իրենց անուններով անոնք ներկայանան բոլորիս: «Հրդեհ նաւթագործարանում» : Բագուի մշակների կեանքից», Թիֆլիս, 1884, «Հրդեհ Միսթարեան վանաց: 1883 տարւոյն Յուլիսի 14-ին», Վենետիկ, 1884, «Հրդեհը հինաւուրց հողի», Նիւ ձերգի, 1993, «Հրդեհ կայ... Մարեցէք», Պոլիս, 1968, «Սիրոյ հրդեհ», Երեւան, 2010, «Վերջին հրդեհ», Երեւան, 2011:

Հրդեհ իմ սրտի մէջ Սակաւաթիւ են «հրդեհ» երգերը հայկական երգարուես-

տի մէջ: Նախորդ դարուն Աշուղ ձիւանին, կը յիշէ՞ք, Սասունի նուիրուած եղանակ մը գրեր էր. «Առանց վախի, առանց ահի Քաջերու տուն, Սասունասար, / Քեզնից հրդեհ կը պատահի, Կրակի բուն, Սասունասար»: Իսկ այժմ հայրենիքի մէջ կան «Սիրոյ հրդեհ», «Բոց ու հրդեհ» կամ նման անուններով երգեր: Որպէսզի ձեր գիշերը ունենայ քաղցր աւարտ՝ որոշեցի վերջինի խօսքերը մէջբերել եւ ձեզի հրաժեշտ տալ: Մինչեւ մեր յաջորդ հանդիպումը, կը մաղթեմ, որ դուք հեռու կը մնաք բոլոր վտանքներէ:

Բոց ու Հրդեհ... Ո՞նց է սիրտը իմ վառուում,

Բոց ու Հրդեհ ... Սիրելով քեզ հետ կուռում, Հրդեհ՝ իմ սրտի մէջ, Որը չունի վերջ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ**  
**(200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
**ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### Անգլիոյ Գաւաթ.

#### «Մանչըսթըր Սիթին» Հասաւ 1/8 Եզրափակիչ

Անգլիոյ ախոյեան «Մանչըսթըր Սիթին» հասաւ Անգլիոյ գաւաթի 1/8 եզրափակիչ: Խօսակց Կոլաբարտոլայի գլխավորած խումբը հիւրընկալեց «Լեյթոն Օրիենթին» եւ յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով:



«Մանչըսթըր Սիթի» առաջին կողմը նշանակեց խումբի նորեկ, ուզբեկ պաշտպան Ապտուկոտի Խուսանովը: Յաղթական կողմ հեղինակ դարձաւ պեւլիքացի կիսապաշտպան Քեւին Տէ Պրուչին:

#### «Ասթոն Վիլան» Պարտութեան Մատնեց «Թոթենհեմին»

Անգլիոյ գաւաթի մրցաշարքի 1/16 եզրափակիչին «Ասթոն Վիլան» մրցեցաւ Լոնտոնի «Թոթենհեմին» հետ եւ յաղթեց 2:1 արդիւնքով:

«Ասթոն Վիլան» կողմը նշանակեցին անգլիացի կիսապաշտպաններ ձեյքըպ Ռեմսին եւ Մորկան Ռոճըրզը: «Ասթոն Վիլան» հասաւ 1/8 եզրափակիչ:

#### «Լիվերպուլի» Պարտութիւնը



Փրեմիեր Լիգայի առաջատար «Լիվերպուլը» պարտութիւն կրեց Անգլիոյ գաւաթի մրցաշարքի 1/16 եզրափակիչին:

«Լիվերպուլ» հիւրընկալեց «Պրիմուտ Արկայլին», որ առաւելութեան հասաւ նուագագոյն արդիւնքով:

«Պրիմուտ Արկայլը» հանդէս կու գայ Անգլիոյ Ախոյանութեան Լիգային մէջ, որ կը նկատուի Բ. դասակարգ:

#### «Պրայթըրը» Պայքարէն Դուրս Մղեց «Չելսիին»

Լոնտոնի «Չելսին» չկարողացաւ հասնիլ Անգլիոյ 1/8 եզրափակիչ: Խաղացի էնցօ Մարեակայի գլխավորած խումբը հիւրընկալեց «Պրայթըրին» եւ պարտութիւն կրեց 1:2 արդիւնքով:

#### «Նիւքասլ Եունայթըտ» Հասաւ 1/8 Եզրափակիչ

Անգլիոյ գաւաթի մրցաշարքի 1/16 եզրափակիչին «Նիւքասլ Եունայթըտ» հիւրընկալեց «Պրիմիեր Դիվիզիոն» եւ յաղթեց 3:2 արդիւնքով:

«Նիւքասլ Եունայթըտը» հասաւ 1/8 եզրափակիչ:

#### «Մանչըսթըր Եունայթըտ» Աւելի Զօրաւոր Էր «Լեսթեր Սիթին»

«Մանչըսթըր Եունայթըտը» հասաւ Անգլիոյ գաւաթի 1/8 եզրափակիչ:

«Մանչըսթըր Եունայթըտ» «Օլտ Թրաֆորտ» մարզադաշտին վրայ ընդունեց «Լեսթեր Սիթին» եւ պարտութեան մատնեց զայն՝ 2:1 արդիւնքով:

#### ՊՍԺ-ն Խնդիրներ Զունեցաւ

Ֆրանսայի առաջնութեան 21-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն մրցեցաւ «Մոնաքոյի» հետ: Սպանացի Լուիս Էնրիկէի գլխավորած խումբը յաղթեց 4:1 արդիւնքով:

#### «Պարսելոնայի» Յաղթանակը՝ 4:1



Սպանիոյի առաջնութեան 23-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելոնան» հիւրընկալեց «Սելիւրային» եւ յաղթեց 4:1 արդիւնքով:

7-րդ վայրկեանին հանդիպման հաշիւը բացաւ կատալոնական ակումբի լեհ յարձակող Ռոպերտ Լեանտովսկին: 1 վայրկեան ետք պատասխան կողմը նշանակեց գոլից երկուսը յարձակող Ռոբերտ Կլոսը:

Երկրորդ խաղակէսին «Պարսելոնային» ուշադրութիւն գրաւեցին սպանացի կիսապաշտպան Ֆրեմին Լոպես Մարտինը, պրագիցի յարձակող Ռաֆինեան եւ սպանացի պաշտպան Էրիկ Գարսիան:

«Պարսելոնան» 48 կէտով երրորդն է, «Սելիւրան» 13-րդ տեղը կը գրաւէ՝ 28 կէտ:

#### Անչելոտի. Շատ Բարդ Հանդիպում Էր


Մատրիտի «Ռեալի» իտալացի գլխավոր մարզիչ Կառլօ Անչելոտին մեկնաբանած է 1:1 արդիւնքով Մատրիտի «Աթլետիքոյի» դէմ Սպանիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանի խաղը:

«Առաջին խաղակէսին դանդաղ կը խաղայինք, բայց երկրորդ խաղակէսին ամբողջովին կը վերահսկէինք խաղը: Վինիսիուսն ու Ռոտրիկոն շատ վտանգաւոր պահէր ստեղծեցին:

Մեր խումբը լաւ աշխատեցաւ, իւրաքանչիւրն առաւելագոյնը տուաւ խաղի ընթացքին: Շատ բարդ հանդիպում էր: «Աթլետիքոն» կը պաշտպանէր եւ կը յարձակէր: Անոնք շատ լաւ պաշտպանեցին:

Տղաքը տիրած են, քանի որ արժանի էին յաղթանակի: Մօտ էինք յաղթանակի, բայց պէտք է ուրախ ըլլանք, որ կը շարունակենք գլխավորել մրցաշարային աղիւսակը», - Անչելոտի խօսքը կը մէջբերէ Marca-ն:

«Ռեալը» առաջին դիրքի վրայ է 50 կէտով, «Աթլետիքոն» 49 կէտով երկրորդն է:



#### «Ինթեր» Պարտուեցաւ «Ֆիորենթինայէն»

Իտալիոյ առաջնութեան 14-րդ հանգրուանի անաւարտ մնացած խաղին (0:0) ախոյեան «Ինթերը» հիւրընկալեց «Ֆիորենթինային» եւ պարտութիւն կրեց 0:3 արդիւնքով:

Դեկտեմբերի 1-ին այս հանդիպումը մնացած էր անաւարտ, քանի որ Ֆլորենցիան ներկայացնող խումբի խաղացող էտտորսօ Պոլենի կորսնցուցած էր գիտակցութիւնը: Հանդիպումը վերսկսաւ 17-րդ վայրկեանին:

«Ինթերի» հիմնական կազմին մէջն էր նաեւ Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որ փոխարինուեցաւ 69-րդ վայրկեանին:

«Ինթերը» 23 խաղէն յետոյ 51 կէտով երկրորդն է եւ առաջատար «Նափոլիին» ետ է 3 կէտ: «Ֆիորենթինան» չորրորդն է՝ 42 կէտ:

#### «Պայրըն Միւնիխ» Պարտութեան Մատնեց «Վերտերին»

Գերմանիոյի առաջնութեան 21-րդ հանգրուանի խաղին «Պայրըն Միւնիխ» ընդունեց Պրեմիեր Լիգայի «Վերտերին» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

Տուպլի հեղինակ դարձաւ անգլիացի յարձակող Հարի Քեյնը, որ տուգանային հարուածները կողմ վերածեց: Ուշադրութիւն գրաւեց նաեւ գերմանացի յարձակող Լեոյ Զանեն:

«Պաւերիան» 54 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը, «Վերտերը» 8-րդն է՝ 30 կէտ:

Տուպլի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Ուսման Տէմպէլէն: Ուշադրութիւն գրաւեցին նաեւ փորթուկալացի կիսապաշտպան Վիտինեան եւ վրացի յարձակող Խվիչա Կվարացիսիլան, որ առաջին կողմը նշանակեց փարիզեան ակումբին մէջ:

ՊՍԺ-ն 53 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը, «Մոնաքոն» երրորդն է՝ 37 կէտ: